

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

33րդ. ՏԱՐԻ ԹԻԻ 49 (1649) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒԱՐ 4, 2014
VOLUME 33, NO. 49 (1649) SATURDAY, JANUARY 4, 2014



Պատկանում է
Հ. Գ. Զարգիսյանի Կուսակցության
Կրթական և Կուլտուրային

MASSIS Weekly
1060 N. Allan Ave. Suite 101
Pasadena, California 91104



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



2014

ՄԱՍԻՍ - 2014

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԷՏՈՎ

Միշտ նորի հետամուտ՝ մարդկային մտածողությունը, արտակարգ խանդավառությամբ կը դիմադրե վաղուան բացուող Ամանորեան այգեբացը: Նորը խոստումնային, ոգեւորիչ եւ լուսատեսական բնատուր յատկութիւններով օժտուած, կը ներշնչէ կամբ ու եռանդ նաեւ անոնց, որոնք շրջանաւարտ տարուան ընթացքին ծանր օրեր ապրած էին: Արդարեւ, Նոր Տարին, իր ստեղծած սոնական հմայքին մէջ կ'անդէ բնդհանրապէս մարդկային մտածողութիւնը, անոր ընծայելով չիրականացած եւ կամ թերաւարտ ակնկալութիւններու իրականացման երազանք, որ վեռական դեր կը խաղայ ժողովուրդներու ազգային, ընկերային եւ քաղաքական կեանքին մէջ:

Ինչպէս ուրիշներու, այնպէս ալ մեր ժողովուրդի պարագային, մեր ազգային-եկեղեցական, հասարակական եւ քաղաքական կեանքին ներս, Նոր տարուան սեմին մեր հիւսած ակնկալութիւններու իրականացման յոյսերը կը մնային խարկանք: Մեր ունեցած երազները չէին իրականանար՝ բայց, կը մնար Ամանորեայ յաւիտենական հմայքը: Նոր Տարին իր յաւիտենական դերին մէջ էր: Ան կուգար վերստին աշխուժացնելու կեանքը: Ան կուգար նոր շունչ տալու: Նոր կամեցողութեամբ գինելու մարդկային հասարակութիւնները: Կուգար նոր մղում տալու մեր նահանգող հաւատքներուն: Այդ բոլորը անշուշտ կը խանդավառէին մարդ արարածը, որ մոռցած նահանգող տարուան ընթացքին արձանագրուած ձախողութիւնները, յուսախարութիւնները, դառնութիւնները՝ կը հիւսէ նոր նոր երազներ, մաղթանքներու անհատուած շնայութեան մէջ:

Արդարեւ, մեր առաջնահերթ մաղթանքներն ու ակնկալութիւններն էին, որ Նոր Տարին աշխարհիս բերէ խաղաղութիւն, ազգերու միջեւ բարեկամութիւն եւ համագործակցութիւն, ի խնդիր մարդկութեան լուսաւոր ապագային, արդիւնաւետ ստեղծագործական աշխատանքին եւ մարդու երջանկութեան: Զեղեքներումները սակայն, եղան պատերազմներ, անբարկումներ, համատարած ողբերգութիւններ...:

Մեր մաղթանքն ու ակնկալութիւնն էր, ընթացիկ Նոր Տարին նախորդող անցած եւ անցնող Ամանորներէն, բարոյ լուծում բերել մեր եկեղեցական տագնապին: Մեր ակնկալութիւնները ի դերեւ ելան: Տասնամեակներ գոյատեւող ներքին տագնապները մնացին ազգը ներքնապէս տարանջատող, հիւժոյ մղձաւանջ: Կարելի չի դարձաւ նուիրագործել մեր նուիրական Աթոռներու միասնութիւնը, բնդհանրապէս՝ ամէնուրեք կը շեշտուէր անոնց բաժանեալ կարգավիճակը՝ սկսեալ անոնց ներքին կառոյցներէն մինչեւ միջազգային թատերաբեմերու վրայ, ուր տակաւ կը շեշտուէր անոնց մրցակցական այսպանելի գործընթացը: Աւելին՝ մեր նուիրական աթոռները տակաւ կը հեռանային իրենց հոգեմտաւոր, անհոգական մարտահրաւերներէն, առանկազոյն ներգրաւուելով հոգեւոր կոչումին հետ անհաշտ քաղաքական գործընթացներէն ներս, որոնք, կը վնասէին իրենց հայրական հոգածու ծառայութիւններուն, որոնց այնքան կարօտը ունէր մեր ժողովուրդը, աշխարհով մէկ տարածուած:

Մեր մաղթանքն ու ակնկալութիւններն էին ներկայ ընթացիկ Նոր Տարին նախորդող անցած եւ անցնող Ամանորներէն, բարոյ լուծում բերել մեր հայրենական տագնապներուն, որոնք կ'արտայայտուէին, նոյնպէս, ժողովուրդ-պետութիւն բաժանուածութեամբ, ժողովրդավարութեան բացակայութեամբ, իշխանութիւններու եւ իշխանաւորներու ինքնակամ գործելաճոյսով արձանագրուած սահմանադրական խախտումներով, օրէնքի առջեւ տիրող խտրական, այսպէս անարդար վերաբերմունքով, ֆիզիքական անապահովութեամբ, հայրենաբնակ ժողովուրդի կենսամակարդակի անողորմ վայրէջումով, անգոր-

ծութեամբ, հասակ առնող նոր սերունդներուն վիճակուած անհեռանկարային ապագայով եւ այլապէս ողբերգականը՝ երկիրը կոնակէն պատուհասող անարգել արտագաղթով: Նոր Տարին չի լսեց մեր մաղթանքները: Լուռ անցաւ մեր ակնկալութիւններուն վրայէն: Ժողովուրդ - պետութիւն անդարմանելի տարանջատումը տակաւ շեշտուեցաւ մեր մայրենի երկրին մէջ...:

Մեր մաղթանքն ու ակնկալութիւնն էր, ներկայ, ընթացիկ Նոր Տարին նախորդող անցած եւ անցնող Ամանորներէն արդար լուծում բերել մեր ժողովուրդի դէմ Օսմանեան կայսրութեան կողմէ իրագործուած Յեղասպանութիւնը ճանկնալու, դատապարտելու եւ հայ ժողովուրդին հատուցելու անցնութեամբ: Յեղասպանութիւն՝ որուն հարիւրամեայ պատմական իրողութիւնը կը մերժուէր ու անարգօրէն խեղաթիւրուէր համեմուն կայսրութեան ժառանգորդ արդի Թուրքիոյ կողմէ: Աշխարհի գերգոր պետութիւններէն շատեր՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն սկսեալ, քաղաքական, դաշնակցային եւ ռազմավարական շի հաշիւներէ թելադրուած կը զօրակցէին Թուրքիոյ հետ, ինչ որ արդարադատ մտածողութեան կողմէ կը նկատուէր փաշայեղակ մեր գեղասպանութիւններու, որոնց ակնաւառս վկան էր մերօրեայ մարդկութիւնը...: Նոր Տարին չի լսեց մեր մաղթանքները: Լուռ անցաւ մեր ակնկալութիւններուն վրայէն:

Շրջանաւարտ Տարուան ներկայ հաշուեփակման հանգրուանին, որ շարժառիթը հանդիսացաւ մեր արձանագրած վերոյիշեալ մտորումներուն՝ մեր մէջ գերիշխող կը մնայ անտուող Ամանորի ներշնչող լուսատեսութիւնը, որ փաստօրէն կը մերժէ ամէն յոռետեսութիւն, ուժգին կանչած իր լինելիութեան հրաշագործ հաւատքին:

Մենք կը հաւատանք, որ մեր պատակտեալ եկեղեցին պիտի վերագտնէ իր միասնութիւնը եւ պիտի վերադառնայ իր դարաւոր կոչումին, հաւատարիմ՝ իր ազգային, մշակութային, գրական եւ հոգեւոր ժառանգութիւններուն, որոնցմով նուիրագործեց մեր ժողովուրդի ազգային ինքնութիւնը, նկարագիրն ու լինելիութիւնը:

Մենք կը հաւատանք, որ մեր հայրենիքէն ներս ուշ կամ կանուխ պիտի տիրապետէ ժողովրդավարութիւնը վերացուի ժողովուրդ-իշխանութիւն անմիաբանութիւնը: Պիտի վերստին գործէ սահմանադրական կեանքը: Կասեցուի արտագաղթը առաջին անգամ ֆիզիքական անապահովութեան, գործազրկութեան, չփառութեան եւ ապագայի հանդէպ անվստահութեան: Աւելի քան երբեք պիտի զարգանայ Հայրենիք - Սփիւռք փոխադարձ վստահութիւնը եւ կառուցողական կապերը: Մեր երկրորդ Հայրենիք՝ հերոսական Արցախը պիտի ստանայ միջազգային ճանաչումը, մի անգամ ընդմիջտ վերջ տալով ազերի բարբառանքներուն:

Մենք կը հաւատանք, որ հայ ժողովուրդի դէմ իրագործուած Յեղասպանութիւնը իր արդար լուծումը պիտի գտնէ: Արդի Թուրքիան պիտի ճանկնայ Օսմանեան Յեղասպանութիւնը: Պիտի դատապարտէ եւ պիտի հատուցէ զայն: Համայն մարդկութիւնը պիտի խոնարհի Յեղասպանութեան զոհ մէկ ու կէս միլիոն նահատակներուն հարիւրամեայ անթառամ յիշատակին առջեւ...:

Այս հաւատքով ու ներշնչումով կը փութանք ջերմօրէն շնորհաւորել հայրենիքի, Սփիւռքի եւ աշխարհով մէկ տարածուած մեր ժողովուրդի ազգային, քաղաքական, եկեղեցական, բարեսիրական, կրթական, մշակութային եւ հասարակական, անխտիր բոլոր կառոյցներուն Նոր Տարին եւ Սրբ. Ծնունդը, մաղթելով միասնութիւն, երջանկութիւն, յաջողութիւն եւ ամենայն բարիք:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.
Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax : -----

ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳՐ՝ ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ՝ ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
Ֆեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626)797- 6863
E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$80 (Second Class), \$125.00 (Air Mail)
Overseas, \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԻ. ՓՆՏՈՏՈՒՔ, ՀՈԳԵՎԱՐՔ ԵՒ... ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Էտուարտ Ա. Գրիգորեան

2013-ը սպասուածէն շատ աւելի հարուստ եղաւ քաղաքական բարդ եւ երբեմն նաեւ խիստ անկանխատեսելի իրադարձութիւններով: Պատճառը թերեւս տարածաշրջանային ա՛յն աննախադէպ ու կատաղի դիմադրութիւնն էր, որ անցնող տարուան երկրորդ կիսուն «Արեւելեան Գործընկերներ»-ը ցուցաբերեցին իրենց «Արեւմտեան Գործընկերներ»-ուն հանդէպ:

Չակերտներու մէջ առնուած քաղաքական այս եզրերը /թերմին/ վերջերս շրջանառութեան մէջ դրուած եւրոպական քաղաքական բառարանի դիւանագիտական միտքի հերթական «գոհար»-ներէն են:

Ըստ այս ձեւակերպումներուն, կը պարզուի, որ սուրիական թնջուկէն ծայր առած աշխարհաքաղաքական առճակատումը, որ երկիր մոլորակը հասցուցած էր երրորդ աշխարհակործան պատերազմ-անդունդի եզրին եւ իրաքէն մինչեւ Ափրիկեան Մալի՝ հարիւր հազարաւոր զոհերու եւ միլիոնաւոր տնաւեր գաղթականներու անկառավարելի հոսքի պատճառ դարձած էր՝ բնաւ ալ Համաշխարհային Աղէտ չէր, այլ Արեւելեան եւ Արեւմտեան «գործընկերներ»-ուն՝ չ պաշտօնական հանդիպում...

Չկեղծենք, չխաբենք ու չխաբուինք՝ դժուար է պատկերացնել, թէ մէջ մըն ալ ե՞րբ, ո՞ր դարուն աւելի արժեգրկուած, աւելի խղճուկ, տհաս ու ստալոյդ եղած է քաղաքական - դիւանագիտական միտքը, քան մեր օրերուն: Ընդամէնը օրեր առաջ ամբողջ աշխարհը տեսաւ այս նոյն միտքի ամբողջ «պերճանքն ու թշուառութիւնը», մարդու իրաւունքներու, ազատութեան եւ արդարութեան համար մղուող պայքարի անկտրուծ Նահապետ՝ Նելսոն Մանտելայի յուղարկւորութեան ծէսի ընթացքին: Բացէք այդ օրերու համաշխարհային մամուլի որեւէ էջ... վստահաբար էջը ողողուած պիտի տեսնէք աշխարհի գերհզօր տէրութիւններու ներկայ ու նախկին նախագահներու եւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներու անբռնագրօս ու ծիծաղկոտ լուսանկարներով:

Այնքան ծիծաղկոտ, որ կարելի է մտածել, թէ անոնցմէ ոմանք կամ անմեղսունակ են, կամ սգոյ տխուր արարողակարգը շփոթած են «բարձրաճաշակ» նորաձեւութեան ամսագրերու գովազդային էջերու հետ: Խայտառակութիւնը

«Ձարմանալի էակ է մարդը. երբ հարստութիւն կորսնցնէ՝ կը նեղուի, բայց անտարբեր կը մնայ կեանքի օրերու անվերադարձ կորուստին հանդէպ...»

ԱՊՈՒԼ-ՖԱՐՍՉ

13-րդ դարու արաբ փիլիսոփայ-բանաստեղծ

այնքան ակնյայտ էր, որ ոմանք իրենց «անբասիր վարկանիշը» փրկելու համար ստիպուած եղան հրապարակաւ ներողութիւն ինդրելու՝ չմոռնալով իրենց ներողութիւնները արդարացնել ու անտրամաբանական արդարացումներով: Առհասարակ, վերջին տասնամեակներուն անբացատրելի յաճախականութիւն արձանագրած է տարբեր առիթներով ներողութիւն ինդրող պետութիւններուն եւ իշխանութիւններուն թիւը, եւ մարդկային առաքինի վերաբերմունքի այդ վեհանձն դրսեւորումը, կարծես թէ քաղաքական աժան դիմակահանդէսներու բաղկացուցիչ մասը դարձած է:

Օրինակ, վերջին վեց-եօթ տասնամեակներու ընթացքին ամերիկեան իշխանութիւնները քանի մը անգամ ներողութիւն ինդրած են Ամերիկայի բնիկ հնդկացի-կարմրամորթներէն՝ գիրենք հարիւր հազարներով ջարդելու համար, ճափոնցիներէն՝ անոնց Հիւրո-չիմա եւ Նակագաքի խաղաղ քաղաքներուն վրայ հիւլէական ուժը նետելու համար, վիեթնամցիներէն՝ իրենց երկիրը տասնամեակ մը անընդմէջ սպանդանոցի եւ անառականոցի վերածելու համար, իրաքցիներէն, որովհետեւ ամերիկեան օդաչուները արաբական գիւղի խաղաղ հարսանիքը ահաբեկչական խմբաւորումի հետ շփոթած եւ արդիւնքին մէջ՝ իրենց գերհզօր ուժակոծիչներով հողին հաւասարեցուցած էին լեռնային փոքրիկ գիւղակը իր հարս ու փեսայով եւ այդ չարաբաստիկ հարսանիքի հարիւրէ աւելի մասնակիցներով:

Կարելի է չիշել նաեւ բրիտանացիներն ու հնդիկները, գերմանացիներն ու հրեաները, լեհերը, ֆրանսացիներն ու այլճերիացիները, ճափոնցիները, չինացիներն ու թիպեթցիները... ցանկը հարուստ է, եւ մերօրեայ աշխարհաքաղաքական գործընթացներէն դատելով՝ ներողութիւններու հերթական շքերթը եօթը սարի ետեւ չէ:

2013-ի աւարտը, բարեբախտաբար քիչ մը գսպեց բռնկուող համաշխարհային հրդեհին ամենակուլ ախորժակը, եւ առայժմ

անյայտ ժամանակով, Արեւմտեան եւ Արեւելեան «գործընկեր»-ները յաջողեցան ժամանակ շահիլ՝ քաղաքական նորանոր վերադասաւորումներու համար:

Այնպէս որ կանուխ է խօսիլ որեւէ կողմի յաղթանակի կամ պարտութեան մասին: Առաւել եւս ա՛յն ժամանակներուն, երբ քաղաքական գերիշխանութեան եւ ամէն ձեւով ուրիշի հաշտոյն «ինքնահաստատուելու», գերշահոյթներ ստանալու մոլուցքը այնքան կուրցուցած է մեծապաշտական իշխանաւորները, որ անոնք այլեւս դժուար կ'ըմբռնեն այն պարզ ու ճշացող ճշմարտութիւնը՝ թէ «գործընկեր»-ներու վտանգաւոր առճակատման պարագային յաղթողներ չեն կրնար ըլլալ:

Չեն կրնար, քանի որ «Արեւմուտք-Արեւելքը», իրականութեան մէջ տիեզերքի անսահմանութեան մէջ լողացող միեւնոյն հսկայական նաւու աշխարհագրական հատուածներն են ընդամէնը եւ... ուրիշ ոչինչ:

Քաղաքական կեղծ փնտրտուքներն ու ճգնաժամային հոգեվարքերը, որոնք պարբերաբար կը ցնցեն մոլորակը՝ իրականութեան հետ ոչ մէկ կապ ունին, իսկ իրականութիւնը թէեւ դաժան, բայց միշտ պարտաճանաչ, ճիշդ ու գործնական է՝ ընկղմող նաւուն վրայ յաղթողներ չեն կրնար ըլլալ...

Այս մասին, սակայն, առանձին-առանձին եւ աւելի մանրամասն...:

Ա. ՓՆՏՈՏՈՒՔ

Կը չիշէ՞ք անմահ թուճանեանի «թմկաբերդի Առումը» պոէմի այն հատուածը, երբ Շահը այլեւս անկարող գէնքի ուժով գրաւելու թմկաբերդը՝ կ'որոշէ դիմել շողոքորթութեան, քաջ գիտնալով որ՝ /Ուր ասեղ կուռով չի մտնիլ արքան/, /Ղոնաղ է աշուղն իրեն սագի հետ/:

«Խոստացի նըրան իմ ոսկի գահը, Խոստացի նըրան ամէ՛ն, ամէ՛ն բան, Ինչ կարող է խոստանալ Շահը, Երկրակալ Շահը իր սիրած կընկան»:

Ահա թէ Շահը ինչպիսի առաջադրանքով կը դրկէ իր քաղցրաշուրթ երգիչը՝ գրաւելու համար թմկայ տիրուհին «ազա՛ սիրտը»: Վերջաբանը լաւ ծանօթ է ընթերցողին, իսկ ատիկա այնքան հին եւ ունայն է, որքան որ ինք՝ մարդկութիւնը:

...Երեք տասնամեակ անընդմէջ, իրանի իսլամական Հանրապետութիւնը հնարաւոր բոլոր քաղաքական ու տնտեսական շրջափակումներուն ենթարկելէ եւ, այնուամենայնիւ, բաղձալի նպատակին չհասնելէ ետք՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները հիմա որոշած են երկխօսութեան անցնիլ իրանի հետ: Աւելին, որպէսզի երկխօսութիւնը բարեկամական ու ջերմ երանգներ ստանայ, գայն կ'առաջարկեն համեմել ֆութպոլային բարեկամական խաղով եւ մշակութային մէկ-երկու ձեռնարկներով:

Կ'առաջարկեն, առանց իրենք իրենց դոյզն իսկ հաշիւ տալու, որ քաղաքակրթութեան օրրան Արեւելքը լաւ գիտէ «թմկայ Տիրուհի»-ներու պատմութիւնը:

Այս փաստը, անշուշտ, անտարբեր չէր կրնար ձգել Ամերիկայի հաւատարիմ գործընկերներ՝ իսրայէլն ու Թուրքիան: Ինչպէս գիտէք, անոնցմէ առաջինը յայտարարեց, թէ իսրայէլը պէտք է քաղաքական աւելի հաւատարիմ դաշնակիցներ փնտռէ, որոնք սերտաճած չեն արաբական երկիրներու նաւթային միլիառաւոր տուլարներուն հետ, իսկ երկրորդը՝ Թուրքիան, ա՛լ աւելի գործնական քայլեր առաւ եւ ամերիկացիներուն հետ խզեց հակաօդային պաշտպանութեան բնագաւառի մէջ համագործակցութեան վերաբերող բոլոր համաձայնութիւնները:

Ոչ թէ միամտութեամբ, այլ քաղաքական կուրուլթեամբ պէտք է տառապիլ, ենթադրելու համար, թէ ամերիկացիները անակնկալի եկան եւ կամ լաւագոյնս չէին հաշուարկած դէպքերու այսպիսի ընթացքը: Աւելին՝ եղածը ճիշդ այն էր, ինչին որ անոնք կը ձգտէին եւ պէտք է հաստատուել, որ ամերիկացիները նիւթական եւ դիւանագիտական նուազագոյն կորուստներով հասան ատոր:

Երեւութապէս այս բոլորին հետ բացարձակ կապ չունեցող իրանեան «սիրախաղերու» արդիւնքին մէջ անոնք մէկ անգամէն

Շաք-ը էջ 6

**ՇՆՈՐՀԱՒՈՐ
ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԹԱԴԷՈՍ ԵՒ ՆՈՐԱ ՔԵՕՐՕՂԼԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2014

2013-Ի ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԳԼԽԱՒՈՐ ԱՆՑՈՒԴԱՐՁԵՐԸ

ՅՈՒՆԻՈՒՐ

3-ին 27 շիթ ուխտաւորներ կը գոհունանան անձնատարանական արարքով Իրաքի Մուսայիպ քաղաքին մէջ:

4-ին 9 հոգիներ կը մեռնին Դամասկոսի մէջ ակնանհարուած ինքնաշարժի պայթիւնով:

8 Իրանցի 48 առեւանգեալներու ազատ արձակման համար 2,130 սուրիացի բանտարկեալներ ազատ կ'արձակուին վարչակարգային ոյժերու կողմէ:

15ին Հալէպի համալսարանին վրայ ինկած ռումբի մը պայթիւնով պատճառ կը դառնայ 83 հոգիներու մահուան եւ 150 ուրիշներու վիրաւորուելուն:

Ղրգայի մէջ շոգեկառքի արկած մը պատճառ կը դառնայ 19 եգիպտացի բանակայիններու մահուան եւ կը վիրաւորուին 120 հոգիներ:

Ալճերիացի ազատամարտիկներու կողմէ 4 օր բռնազրուածան տակ կը պահուին բրիտանական B.P. քարիւղի ընկերութեան հանքերը, սպաննելով 48 պատանդներ:

17ին 106 հոգի կը ջարդուին սուրիական բանակին կողմէ ընդդիմադիրներու վրայ կատարուած յարձակումներու ընթացքին: 21ին՝ Սուրիոյ Սալամիէ շրջանին մէջ ինքնաշարժի պայթիւնին զոհ կ'երթան 30 հոգիներ:

22ին ինքնաշարժներու շարք մը պայթիւններ 17 հոգիներու մահուան պատճառ կը դառնան Պաղատի մէջ:

23ին 4 Անձնասպանական արարքով մը Իրաքի Թուզ խարմաթօ մզկիթին մէջ 23 հոգի կը զոհուին:

25ին 4 2011 թուականի եգիպտական յեղափոխութեան դէմ կատարուած գանգոյցներու ցոյցերու ընթացքին մէկ գինուոր մը կը մահանայ եւ 456 ուրիշներ կը վիրաւորուին երկրին մէջ: Նոյն օրը Սուրիոյ Կոյանի բարձունքներու վրայ երկու ինքնաշարժի պայթիւնով 8 հոգիներ կը մեռնին:

26ին Եգիպտոսի Փոր Սայիտ քաղաքին մէջ բողոքի հսկայական ցոյցին զոհ կ'երթան 7 քաղաքացիներ, վիրաւորներուն թիւը կը հասնի 630ի:

ՓԵՏՐՈՒՄ

3ին՝ Իրաքի Քէրքուք քաղաքին մէջ բռնատար կառքի մը պայթիւնը պատճառ կը դառնայ 33 հոգիներու մահանան:



8ին՝ Իրաքի մէջ ռմբահարումներու շարք մը պատճառ կը դառնայ 29 զոհերու եւ 69 վիրաւորներու:

17ին՝ ակնանհարուած ինքնաշարժներ Իրաքի մայրաքաղաքին մէջ պատճառելով 37 մահ եւ 130 վիրաւոր:

19ին՝ Եմէնի մայրաքաղաք Սանաայի մէջ օդային ոյժերու սաւառակի մը պայթիւնը 12 մեռեալ եւ 10 վիրաւոր կը պատճառէ:

21ին՝ Դամասկոսի մէջ ռմբակոծումներու շարք մը 83 մեռեալ եւ 250 վիրաւոր:

22ին՝ Սուրիական բանակի հրթիռներ կ'արձակուին հակակառավարական ոյժերու վրայ Հալէպի մէջ, 29 մեռեալ եւ 150 վիրաւոր:

23ին՝ Հարաւային Սուտանի Տարֆուր շրջանին մէջ ցեղախումբերու միջեւ ծագած կռիւներուն պատճառով 51 սպանեալ եւ 62 վիրաւոր:

26ին՝ Եգիպտոսի Լիւքսոր քաղաքին մէջ օդապարիկ մը ջախջախուելով 19 զբօսաշրջիկներ կը մահանան:

Պաղեստինի Կազա քաղաքէն Իսրայէլի վրայ հրթիռի մը արձակումով վերջ կը գտնէ 2012ի Նոյեմբերէն ի վեր հաստատուած զինադադարին:

28ին՝ Պաղատի մէջ շարք մը պայթիւններու պատճառով 28 հոգի կը զոհուի եւ 60 ուրիշներ կը վիրաւորուին:

ՄԱՐՏ

4ին՝ 40 սուրիացի զինուորներ դարանակալ կը սպաննուին արեւմտեան Իրաքի մէջ:

6ին՝ Սուրիոյ հակա-կառավարական ոյժերը կը գրաւեն Ալ Ռաքթա քաղաքը:

14ին՝ Շարք մը ինքնաշարժներու պայթիւնով 25 հոգի կը մահանան եւ 50 հոգի կը վիրաւորուի Պաղատի մէջ:

17ին՝ Իրաքի Պասրա քաղաքին մէջ ինքնաշարժի պայթիւնով 10 մեռեալ:

18ին՝ Իրաքի մէջ ռմբակոծումներու եւ զինարձակումներու զոհ կ'երթան 98 հոգի, վիրաւորներու թիւն է 248:

21ին՝ Դամասկոսի մզկիթներէն մէկուն մէջ ռումբ մը պայթելով պատճառ կը դառնայ 42 հոգիներու մահուան եւ կը վիրաւորուի 84 հոգի:

28ին՝ Դամասկոսի համալսարանին մէջ հրթիռ մը պայթելով 15 ուսանողներ կը մահանան եւ 7 ուրիշներ կը վիրաւորուին:

29ին՝ համակարգուած պայթիւններ տեղի կ'ունենան Իրաքի շիւա մզկիթներու մէջ պատճառելով 23 զոհ:

ԱՊՐԻԼ

1ին՝ անձնասպանական զրոհի պատճառով 9 հոգի կը մեռնի Իրաքի Թիզրիթ քաղաքին մէջ:

6ին՝ Իրաքի Պաաբուլա քաղաքին մէջ ընտրական վրանի մը մէջ անձնասպանական ռմբահարումով 22 հոգի կը զոհուին եւ 60 ուրիշներ կը վիրաւորուին:

7ին՝ Սուրիական օդուժի ռմբակոծումներուն զոհ կ'երթան Հալէպի մէջ 15 հոգիներ, ներառեալ 9 երեխաներ:

8ին՝ Դամասկոսի մէջ ինքնաշարժի մը պայթիւնով 15 հոգի կը

մեռնի եւ 53 հոգիներ կը վիրաւորուին:

Սուտանի Տարֆուր շրջանին մէջ ցեղախումբերու միջեւ ծագած կռիւներու պատճառով 163 հոգի կը վիրաւորուի եւ 50,000 հոգի կը տեղահանուի:

9ին՝ Սուտանի ճանկլի շրջանին մէջ դարանակալ կը մահանան 12 քաղաքայիններ եւ ՄԱԿ-ի պաշտօնեաներ:

11ին՝ Սուրիոյ Տարաա քաղաքին մէջ 57 հոգի կը մեռնի կառավարական զօրքերու յարձակումներուն պատճառով:

15ին Իրաքի տարածքին շղթայագերուած ռմբահարումներուն պատճառով 33 մահ եւ 163 վիրաւոր:

ՄԱՅԻՍ

1ին՝ Իրաքի տարածքին բազմաթիւ ռմբակոծումներու հետեւանքով կը մահանայ 15 հոգի:

Մէլուտական Արաբիոյ հեղեղներուն զոհ կ'երթայ 16 հոգի:

2ին՝ «Իրաքի Որդիներ» կազմակերպութեան անդամներէն 14 հոգիներ զոհ կ'երթան Ֆալլուժայի մէջ:

Սուրիոյ Ալ Պայտա (Պանիասի շրջան) կառավարական զօրքերը կը յարձակին ըմբոստներու վրայ պատճառելով 100 մահ:

Սուտան Հիւսիսային Տարֆուր շրջանին մէջ ոսկիի հանք մը փուլ գալով 60 հանքագործներ կը մեռնին:

ՅՈՒՆԻՍ

10ին՝ Իրաքի մէջ ռմբակոծումներու զոհ 70 հոգի:

16ին՝ Իրաքի մէջ շարք մը ինքնաշարժներու պայթիւնը պատճառ կը դառնայ 20 հոգիի մահուան:

18ին՝ Պաղատի «Ալ Քահիրա» թաղամասին մէջ ռումբ մը պայթելով կը մահանայ 31 հոգի, վիրաւորներուն թիւը՝ 60:

ՅՈՒԼԻՍ

1ին՝ 15 միլիոն հոգի բովանդակ Եգիպտոսի մէջ ցոյցեր կատարելով պահանջեցին իրենց նախագահին Մուհամմէտ Մորսիի հրաժարականը:

2ին՝ Եգիպտոսի նախագահ Մուհամմատ Մորսիի դէմ Գահիրէի համալսարանին մէջ տեղի ունեցած ցոյցերու ընթացքին 16

Շաբ.ը էջ 11

**ՇՆՈՐՀԱՒՈՐ
ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԳԱԲՐԻԷԼ ԵՒ ՄԱՐԻԱ ՄՈԼՈՅԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2014

2013-Ի ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԳԼԽԱԽՈՐ ԱՆՑՈՒԴԱՐՁԵՐԸ

Շարունակում էք 10-էն

Հոգի կը սպաննուի եւ 200 հոգի կը վիրաւորուի:

3ին՝ Եգիպտոսի նախագահը կը պաշտօնազրկուի բանակին կողմէ եւ Ատլի Մանսուր կը նշանակուի ժամանակաւոր նախագահ:

5ին՝ Պաղտատի շիրիաներու մզկիթին մէջ ռումբ մը պայթելով կը զոհուի 15 հոգի:

8ին՝ Գահիրէի մէջ տեղի ունեցած բողոքի նստացոյցին բանակի կողմէ յարձակում մը կատարուելով 42 հոգի կը սպաննուի եւ հարիւրաւորներ կը վիրաւորուին:

21ին՝ Եգիպտական բանակի հանրակառք մը բեռնատարի մը բախելով 15 զինուորներ կը մեռնին:

27ին՝ Գահիրէի մէջ ցուցարարներու հետ եղած ընդհարումներու հետեւանքով 100 հոգի կը մահանայ եւ 1500 հոգի կը վիրաւորուի:

30ին՝ Սուտանի ցեղախումբերու միջեւ եղած կռիւներու ընթացքին 134 հոգի կը մեռնի, յատկապէս՝ Տարֆուրի շրջանին մէջ:

ՕԳՈՍՏՈՍ

2ին՝ Հոմա քաղաքի (Սուրիա) ռազմամթերքի պահեստանոցին մէջ եղած պայթիւնի հետեւանքով 40 հոգի կը սպաննուի:

14ին՝ Սաստիկ բախումներ Եգիպտոսի ոստիկանութեան եւ ցուցարարներու միջեւ պատճառ դառնալով 638 հոգիներու մահուան:

15ին՝ Պէյրութի մէջ պատահած պայթիւն մը պատճառ կը դառնայ 20 հոգիներու մահուան եւ 200 հոգիներու վիրաւորուելուն:

19ին՝ 24 Եգիպտացի ոստիկաններ կը սպաննուին Ռաֆահի մէջ:

23ին՝ Լիբանանի Թրիփոլի քաղաքի մզկիթին մէջ պայթած ռումբի պատճառով 50 հոգի կը սպաննուի:

23ին՝ Սուրիական իշխանութիւնները արգելք հանդիսացան ՄԱԿ-ի քննիչներուն այցելելու եւ զեկուցելու քիմիական զէնքերով զոհուածներու վայրի մասին:

28ին՝ ՄԱԿ Ապահովութեան Խորհուրդի նիստէն դուրս կ'ելլեն Չինաստանի եւ Ռուսիոյ պատուիրակները, բողոքելու համար ԱՄՆ-ի այն ճնշումներուն դէմ, որոնք կը միտին անմիջական միջոցառումներ որդեգրել Սու-



րիոյ մէջ գործածուող քիմիական զէնքերուն դէմ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

3ին՝ Եգիպտոսի Սինայի թերակղզիին մէջ 15 զինեալներ կը սպաննուին բանակի ուղղաթիռին կողմէ:

7ին՝ 14 սուրիացի ընդդիմադիրներ կը սպաննուին Դամասկոսի մէջ:

20ին՝ Եմէնի Շապու շրջանին մէջ 46 զինուորներ կը սպաննուին բանակի խարիսխին վրայ եղած յարձակումի պատճառով:

21ին՝ համատարած յարձակումներու պատճառով 100 մեռեալ իրաքի մէջ:

29ին՝ Սուրիոյ Ռաքքա քաղաքի երկրորդական վարժարանին վրայ կատարուած օդային յարձակումի զոհ կ'երթան 16 հոգիներ:

30ին՝ Շարք մը ինքնաշարժերու ականահարումով Պաղտատի մէջ կը սպաննուին 54 հոգիներ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

6ին՝ Եգիպտոսի մէջ տեղի ունեցած քաղաքական դէպքերուն պատճառով կը մահանայ 55 հոգի:

16ին՝ Սուրիոյ Նաուա շրջանին մէջ փոքր հանրակառք մը ականահարուելով 21 հոգի կը սպաննուի:

20ին՝ Իրաքի Համա քաղաքին մէջ բեռնատարով անձնասպանական յարձակումին զոհ կ'երթայ 30 հոգի: Նոյն օրը անձնասպանական այլ արարքով Պաղտատի մէջ կը սպաննուի 37 հոգի:

Այս ամիս նախագահ Պաշար Ասատի արտօնութեամբ միջազգային դէտերը պիտի կարենան բնաջնջել քիմիական զէնքերը: Այս որո-

շումին իրենց հաւանութիւնը յայտնեցին Ամերիկայի Միացեալ Նահանգներն ու Ռուսիան:

ՆՈՅՆՄԵՐ

Եգիպտոսի նախկին նախագահ Մուհամմատ Մորսին շուտով պիտի դատուի իր բազմապիսի յանցանքներուն համար, որոնցմէ գլխաւորներն են պաշտօնի շարաշահում, անգէն մարդոց վրայ կրակելու արտօնութիւն, կաշառակերութիւն եւ այլն: Միւս կողմէ տեղական եւ օտար լրագրողներու վրայ բանեցուած արտակարգ սեղմումներն ու ազատութեանց կաշկանդումը՝ միջազգային հանրային կարծիքին եւ դատապարտութեան արժանացած է: Ներկայիս քանի մը լրագրողներ բանտարկուած կը մնան: Իսկ «Ալ ժազիրա» հեռուստակայանի գրասենեակներն արդէն փակ են:

Սուրիացի գաղթականներուն թիւը երկու միլիոնէն աւելի է: Անոնց կէսը երեխաներ են: Անոնք մղձաւանջային օրեր կ'ապրին: Շատեր վիրաւոր են եւ կամ ֆիզիքապէս տկար, ոմանք ալ հիւանդ են եւ անօգնական: Ներկայիս ՄԱԿի գաղթականներու Օժանդակ մարմինը հանգանակային նոր արշաւ մը նախաձեռնած է մասնաւորաբար օգնելու Լիբանան ապաստանած սուրիացի գաղթականներուն: Անոնցմէ շատեր շտապ օժանդակութեան կարիքն ունին: Իսկ երկրէն ներս ապրող 6.8 միլիոն սուրիացիներ եւս մարդասիրական օգնութեան կարիքն ունին: Ներկայիս սուրիացի գաղթականներ կան մեծ մասամբ Լիբանանի, ինչպէս նաեւ Յորդանանի, Իրաքի, Թուրքիոյ եւ Կիպրոսի մէջ:

Ընդդիմադիր մեծագոյն դե-

կավարներէն գնդապետ Ապտուլ ժապպար Ազալտի (որ ԱՄՆ-էն կարեւոր օգնութիւն ստացողներէն է) հրաժարեցաւ իր պաշտօնէն, առարկելով թէ բաւարար նպաստ չի ստանար եւ այդ պատճառով մեծ կորուրստներ արձանագրած է կուրի ճակատին վրայ:

Փաշով Սուրիոյ՝ Լիբանանի Հրգպալլա կուսակցութիւնը որոշած է Սուրիոյ մէջ պահել իր զինեալները՝ պետութեան կողքին կուռելու համար:

Անապահով վիճակը շարունակուեցան Լիբանանի Թրիփոլի քաղաքին մէջ: Մեծ թիւով բանակայիններ կը պաշտպանեն քաղաքի տարբեր թաղամասերը:

Պատերազմը Պէյրութ փոխադրուելով անձնասպանական երկու ինքնաշարժեր պայթեցան տեղւոյն իրանական դեսպանատան առջեւ, որուն հետեւանքով 23 հոգիներ մեռան, 147 անձեր վիրաւորուեցան:

Մահացու օդային ռմբակոծումները շարունակուեցան Հալէպի մէջ: Իսկ Դամասկոսի արուարձաններուն մէջ կռիւներէն մահացան 160 հոգի:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1ին՝ Յուդարկաւորութեան մը ընթացքին անձնասպանական ռմբահարումի զոհ կ'երթան 17 քաղաքացիներ Պաաքուպայի մէջ:

5ին՝ Եմէնի մայրաքաղք Սա-նայի պաշտպանութեան նախարարութեան շէնքին առջեւ ռումբ մը պայթելով 52 հոգի մահացան եւ 167 ուրիշներ վիրաւորուեցան:

7ին՝ Սուրիոյ ընդդիմադիր նոր խմբակցութիւն մը «Իսլամական ծակատ» կը գրաւէ Սուրիական Ազատ Բանակի հակակռիւտակ գտնուող Պապ էլ Հաուայի գօրանոցը:

12ին՝ Եմէնի մէջ Ալ Քայիտա-չի կատարուելիք օդային յարձակում մը թիրախէն վրիպելով հարսանիքի մը մասնակիցները կը ռմբակոծէ պատճառով 15 քաղաքայիններու մահուան:

13ին՝ 15 իրանցիներ եւ 3 իրաքցիներ կը սպաննուին քարիւղատար խողովակներու վրայ կատարուած յարձակումի մը ընթացքին Պաղտատի մօտակայքը:

16ին՝ Հարաւային Սուտանի նորանկախ հանրապետութեան մայրաքաղաք ժուպայի մէջ ահաւոր

Շարք էք 31

Ս.Գ.Հ.Կ. ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱՃԻՒՂԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԽՈՐԷ ԲՈԼՈՐ ԸՆԿԵՐ-ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ

2014 ԹՈՒԱԿԱՆԸ ԼԱՅՆԱԽՈՂՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ

Շարունակում էք 13-ԷՋ

Հատիրութեան համար մղուող պայքարի մէջ պիտի ներգրաւուեն բոլորը, բոլոր կուսակցութիւններն ու նրանց յարակից մարմինները, բոլոր միութիւններն ու հայրենակցական միութիւնները, մամուլն ու հեռուստատեսութիւնը, ինչո՞ւ ոչ, նաեւ՝ փորձառու անհատներ:

Հայոց Եղեռնի 100-ամեակը այս հազարամեակի թերեւս միակ շօշափելի առիթն է թուրքի հետ մեր հարցերը լուծելու համար: Իսկ մենք դանդաղում ենք պարոններ, դանդաղում: Հաշուած ամիսներ, օրեր են մնացել: Պէտք է «թեւերը քշտած» գործի անցնել:

Ոչ մէկի համար էլ գաղտնիք չէ, որ պայքարի ամենաազդու գէնքն այսօր հեռուստատեսութիւնն է եւ ֆիլմը: Պահանջատիրութեան գործընթացի (չատ օգտագործող բառ Հայաստանում) մէջ, այդ երկու ձեւերն էլ մէկ ոտքի վրայ են քայլում: Դեռ հեռուստատեսութիւնը որոշակի ջանքերի դէպքում կարելի է բաւարար մակարդակ ապահովել, սակայն ֆիլմի հարցում հսկայական ներդրումներ են անհրաժեշտ:

Մենք այդպէս էլ չենք կարողանում շենք-շնորհքով մի ֆիլմ պատրաստել Եղեռնի վերաբերեալ: Ի՞նչ է՝ դրա՞մ չկայ: Ապա փորձեցէք ԹէԼԵԹՈՆ կազմակերպել Եղեռնի 100-ամեակի վերաբերեալ, եւ դուք կը տեսնէք թէ՛ այդ հաւաքուած դրամով քանի՞ կիլոմետր ճանապարհ կը կառուցուի Արցախում:

Դեռեւս երկու տարի առաջ

Հայաստանի Ազգային ֆիլմի կենտրոնի տնօրէն Գէորգ Գէորգեանը Ֆրէզնոյում ծնուած հայազգի նշանաւոր սցենարիստ, բեմադիր, նկարահանող, աշխարհահռչակ բեմադրիչ Ստիվէն Սպիլբերգի Schindler's List ֆիլմի սցենարիստ Ստիվէն Ջախեանին ասել է, որ մենք՝ հայերս, խելքը-գլխին, Եղեռնն արտացոլող իրական փաստերի վրայ հիմնուած համաշխարհային չափանիշներին համապատասխան ոչ մի ֆիլմ չունենք: Չհաշուած միջակ արժէքի ՄԱՅՐԻԿՆ ու ԱՐԱՐԱՏԸ ֆիլմերը:

Պրն. Գէորգեանի խնդրանքը՝ այդ խոշոր արուեստագէտներին՝ Հայոց ցեղասպանութեան մասին մի ֆիլմ նկարելու վերաբերեալ, որքան որ ինձ յայտնի է, արդիւնք չի տուել:

Հայազգի նշանաւոր կինոգործիչը օրինակ բերելով Schindler's List ֆիլմի օրինակը ասել է, որ ինքը ֆիլմերի սցենարներ է գրում միայն իրական փաստերի, շատ անգամ էլ կենդանի, ապրող վկաների եւ ականատեսների վկայութիւնների հիման վրայ, ինչը գործնականում եղել է Schindler's List ֆիլմի պարագան: Քսան տարի առաջ ստեղծուած, համաշխարհային պատաստներ նուաճած, միլիոններ շարժած այդ ֆիլմի գլխաւոր պատմիչ-հերոսը այդ օրերին ապրող ջուրհակահար Օսկար Շինդլերն է եղել:

Կրկին ու կրկին, մէկ, երկու, գուցէ եւ տասը անգամ, եթէ պէտք լինի, պիտի մօտենալ այդ արուեստագէտներին, խնդրել, համոզել,

դրամ տալ՝ որքան որ կը ցանկանան, միայն թէ մինչեւ 1915-ի Ապրիլ ամիսը մէջտեղ հանեն աշխարհը ցնցող մի ֆիլմ Եղեռնի վերաբերեալ:

Եղեռնից վերապրած շատ փոքր թիւ հայեր են մնացել երկրագնդի վրայ: Փնտռէք, գտէք նրանց ու ներկայացրէք հայազգի նշանաւոր կինոգործիչ Ստիվէն Ջախեանին:

Չեմ ուզում հաւատալ, որ նա էլ միւս երկու նշանաւոր ամերիկեան դերասանների նման (Թոմ Կրուզ, Սիլվեստեր Ստալոն) չի վախենայ թուրքերի ահաբեկչութիւնից ու անսայով իր արեան կանչին, կը ցանկանայ իր ժողովրդի համար ճակատագրական այս օրերին իր արուեստով զօրավիզ լինել իր ազգին:

Իսկ մեզ մնում է համախմբուել, քով-քովի գալ: Մոռանալ ամէն մի տեղի-անտեղի քինախնդրութիւն: Հանդուրժողականութեամբ ու լայնախոհութեամբ, որպէս մէկ շունչ, մէկ մարմին գէթ այս մէկ տարուայ ընթացքին միասնական պայքարի կոչ հնչեցնենք ողջ հողագնդի վրայ: Հաւատացէք, մենք կարող ենք: Թէ՛չլիրեաններից, Եանիկեաններից ու Սասունեաններից սկսուած արդարութեան, պահանջատիրութեան պայքարը ի վերջոյ ի լրումին պիտի հասնի:

ԱՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՂՆԵՐ

Փառնս Վարդանեան

Արի, քեզ հետ բեր սեր ու հաշտութիւն, Ու հանգիստ քայլի խաղաղ աշխարհում, Տոպրակներով բեր խաղալիք ու սեր Ու ջերմ համբոյրներ որբերի համար...

Արի, միշտ արի, դու անգորի հայր՝ Ու անգին մայրը ամբողջ աշխարհի, Եւ նրանց սիրով խնդրի Աստուծոյ Գուրդին սրտին, կրակ վառողի...

Արի, քեզ հետ բեր խրատներ բարի, Լցրու նեղ ոգում չարագործների, Կրակ չը վառեն չորս կողմն աշխարհի Արի, այս դաժան կրակը մարի...

Արի, դու արի խաղաղ նոր տարի, Դեզ բանաստեղծիս իղձը կատարի, Կրկին քեզ հետ բեր խաղալիք ու սեր Ամբողջ աշխարհի սրտերը վառիր...

Season's Greetings
AND BEST WISHES FOR A
HAPPY NEW YEAR.

EH National Bank
It's not just business. It's personal.

www.EHNBANK.com




9701 Wilshire Boulevard, Suite 101
Beverly Hills, CA 90212

PHONE: 310.362.2000
FAX: 310.550.0635

MERRY CHRISTMAS & HAPPY NEW YEAR!

Our Heartfelt Appreciation to

THE 143 PARTNER COMPANIES WHO PROVIDED EMPLOYMENT FOR 250 OF OUR GRADUATES & STUDENTS IN 2013.



JOHN DAVIS *Chief Financial Officer*

RAFI OUREALIAN *Chairman of the Board*

Z. GREG KAHWAJIAN *Board Member*



101 East Huntington Drive | Monrovia | California | 91016 | 626.873.2100 | mtsierra.edu

Report Claims \$6.2 Billion Cash Outflow from Armenia Illegally

More than \$6.2 billion was siphoned out of Armenia from 2002 through 2011 as a result of government corruption, tax evasion and other illegal activity, according to an anti-graft group based in Washington.

The watchdog called Global Financial Integrity (GFI) cited the figure, worth nearly twice the Armenian foreign debt, in a report on illicit capital outflows around the world during that period. It claimed that developing countries lost almost \$6 trillion in cash as a result.


The major reason is, according to the GFI report, the worst investment environment in Armenia and the second reason is the corrupt Armenian authorities, and foreign investors are well aware of that.

The GFI report released this month does not specify the source of its information about alleged capital flight from Armenia. It says that cash outflows from the country dramatically increased in 2007, averaging approximately \$1 billion per annum through 2011.

The Armenian Finance Ministry, State Revenue Committee and Central Bank have not yet reacted to the GFI claims. Officials there said on Friday that they will comment after looking into the report.

Economists critical of the Armenian government consider the report's findings credible. Vahagn Khachatryan, a senior member of the opposition Armenian National Congress (HAK), suggested that the large sums were taken out of the country by wealthy government officials and businesspeople evading taxes. He said their reluctance to invest that money in Armenia highlights widespread corruption and other problems with the rule of law.

"That has to do with the existing political situation and political system,"



Khachatryan told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). "People are not sure whether they will be able to preserve their money tomorrow."

Another economist, Bagrat Asatrian, noted that illicit outflows from neighboring Georgia were estimated by GFI at only \$4.5 billion. "Over the past decade Georgia has made substantial progress in fighting against the informal sector of the economy," he said.

Asatrian claimed that Georgia has lost less capital than Armenia also because of its weaker financial ties with Russia. "For the past two decades Russia has been known for a high scale of shadowy financial turnovers and capital flight in particular," he said. "A small part of those outflows have come out through Armenia."

The GFI report rates Russia as the world's second biggest loser of illicit capital after China. It says that as much \$880 billion was taken out of the country from 2002-2011. According to the report, a total of \$4.5 billion was siphoned from Georgia from 2002 to 2011. A total of \$17 billion was siphoned from Azerbaijan.

Armenian U-Turn On EU Not As 'Objective' As Thought

By Emil Danielyan

Armenia's last-minute decision to join a Russian-led customs union at the expense of much closer ties with the European Union has been widely attributed in the West to strong pressure and bullying by Russia. The dominant view among policymakers, diplomats, and pundits there is that President Serzh Sarkisian had no choice but to cave in because of his country's heavy dependence on its main geopolitical ally.

The picture is more complex on closer inspection, however. Sarkisian's parochial interests appear to have been at least as much in play as economic and security considerations. The haste with which his administration is holding accession talks with the Customs Union of Russia, Belarus, and Kazakhstan and its reluctance to seek significant Russian concessions in the process suggest that he is driven at least in part by a deep

sense of personal insecurity.

Moscow increasingly indicated its displeasure with Yerevan this summer as the latter intensified and completed negotiations with the EU over a far-reaching Association Agreement. EU representatives repeatedly made clear that the agreement was "not compatible" with possible Armenian membership in Moscow's customs union. Armenian leaders did not object to this precondition before the EU announced in late July the "substantive completion" of the association talks.

The stage was thus set for the agreement's initialing at the EU's November summit in Vilnius. Vyacheslav Kovalenko, Russia's ambassador to Armenia until March 2013, had joined a host of Kremlin-linked pundits in warning earlier in July that Yerevan would risk alienating Moscow if it stayed out of the Russian-led trade bloc.

Sarkisian's decision to opt for the customs union was privately communicated to Brussels on August 31 and made

Not So Fast...

Armenia's Own Parliament Subverts the Democratic Process

By Richard Giragosian

Armenia has never been known for either upholding the democratic standards or conducting truly uncontested free and fair elections, but even on Armenian standards, a controversial vote in the Armenian parliament has seriously undermined, and embarrassed, the country's already feeble democratic process.

More specifically, as hundreds of demonstrators protested outside of the parliament, the ruling Republican Party demonstrated that to vote in the Armenian parliament, only a majority, and not the rules or procedures count.

After the parliamentary leadership called for an open vote with a show of hands, some 77 deputies from the ruling Republican Party "voted" to approve a highly controversial gas agreement with Russia, which critics consider a serious blow to Armenia's sovereignty.

While the deal itself was already dubious, it is the manner in which the pro-government bloc forced the result, in violation of the democratic process, which raises even more serious concerns. Moreover, as the parliamentary opposition has pointed out, the conduct of the vote itself was in violation of the rules, and declared that the vote was therefore "null and void." In a joint statement, they cited the National Assembly's statutes stipulating that if the electronic system is not used, votes should be counted by a special parliamentary commission, comprised of representatives from all parties in the parliament. Instead, the vote count was done by parliament speaker Hovik Abrahamian and his two deputies, with no participation of any opposition or independent deputies.

Thus, the real meaning of today's incident is the message it sends to those aspiring to a more democratic Armenia: "not so fast." But for those idealists who have not yet given up the fight for democracy, and for those

public following his September 3 talks with Russian President Vladimir Putin held near Moscow. Sarkisian has made only two brief public statements (none of them in Armenia) explaining his dramatic volte-face. "I have repeatedly said before that when you are part of one system of military security it is impossible and ineffective to isolate yourself from a corresponding economic space," he told a joint news conference with Putin.

Strong Enough Levers?

Russia does have strong economic and military levers to exert strong pressure on its sole South Caucasus ally, but their potential impact should not be overestimated. Armenia might have faced the kind of Russian trade sanctions that have been imposed on Moldova and Georgia in recent years had it pressed ahead with the EU accord. But Russia absorbs less than one-quarter of Armenian exports,



opposition deputies fighting to defend the democratic process, the message is even louder: "NOT SO FAST."

The issue was the ratification of a deal that was signed during Russian President Vladimir Putin's recent visit to Armenia, and that formalized the sale of the Armenian government's 20 percent share in the domestic gas distribution network to Russia's Gazprom monopoly. In return, Gazprom promised to write off a \$300 million which the government has incurred as a result of secretly subsidizing the price of Russian natural gas supplied to Armenia since 2011.

More importantly, the deal stipulates that the current and future Armenian governments cannot raise taxes or make any other changes in the regulatory environment for the Gazprom-owned network until January 2044. The Armenian side is also obliged to ensure that domestic gas tariffs in the country are high enough for Gazprom to recoup 9 percent of its capital investments in the network annually, which the media lambasted as undeserved and "unprecedented privileges" for Russia.

Clearly, a difficult year is ahead for Armenia.

Richard Giragosian is the Director of Regional Studies Center

mainly buying agricultural products, prepared foodstuffs and alcoholic beverages. A Russian ban on these imports would have hit Armenia's agriculture hard, but it would not have been enough to wreck the struggling Armenian economy as a whole.

According to Armenian government data, Russia accounted for 23 percent of Armenia's foreign trade in January-October 2013, compared with the EU's almost 29 percent share. Much of the Russian-Armenian trade volume is generated by supplies of Russian natural gas used for producing over one-third of Armenia's electricity, heating homes in the winter, and powering, in the liquefied or pressurized form, the majority of vehicles in the country.

Russia's Gazprom monopoly

Ten Events in Pictures from Armenia and Diaspora



Presidential elections in Armenia

President Serzh Sarkisian was re-elected for a second term according to official results receiving 58 percent of the votes. Heritage leader Raffi Hovannisian polled 37 percent of the votes. The presidential campaign was spurned by all other major opposition and opposition-leaning parties.

Weeks of public protests staged by Hovannisian's "Barevolution" did not prevent Sarkisian from retaking his office.



Armenia joins Russia-led Customs Union

In a dramatic about-face that will likely scuttle Armenia's Association Agreement with the European Union, President Serzh Sarkisian announced on September 3rd his decision to join a Russian-led union of ex-Soviet states after a meeting with Russia's President Vladimir Putin in Moscow.

In a related issue, the pro-government majority in the Armenian parliament ratified on a highly controversial gas agreement with Russia.

Several opposition groups joined the civil campaigns against Armenia's decision to join the Russian-led Customs Union. Representatives of these groups also participated in street protests in early December directed against the visit of Russian President Vladimir Putin to Armenia. They have claimed that by signing integration agreements with Russia Armenia is losing its sovereignty.




"We will not pay 150 drams" protest actions

The Yerevan Municipality decision to increase the public transport fares in the city brought about outbursts. Several civil groups were formed, staging protests and distributing pamphlets against this decision.

In addition, the "Free Car" initiative was launched in which Armenia's celebrities, MPs, and ordinary residents provided - with their own vehicles - free transportation to the people. The municipality was forced to cancel the decision.

Various other social issues, including gas and electricity prices, a controversial pension reform, war veterans' rights also periodically drew attention from Armenia's opposition parties and often became topics of discussions in the National Assembly.



The White House blocks the display of the "Armenian Orphan Rug"

In a new twist to efforts to call attention to the Armenian genocide, a group of lawmakers has accused the Obama administration of blocking a Smithsonian display of a rug woven by orphans of the mass killings about a century ago, The Los Angeles Times writes.

The lawmakers have written to President Obama urging him to make available the rug, presented in 1925 to President Calvin Coolidge and in storage as part of the White House collection, for exhibition.

The roughly 12-foot-by-18-foot Armenian Orphan Rug was to be featured in a Dec. 16 exhibit at the Smithsonian Museum in Washington that sought to call attention to a new book about the rug by Hagop Martin Deranian titled "President Calvin Coolidge and the Armenian Orphan Rug."

A White House spokeswoman said that displaying the rug "for only half a day in connection with a private book launch event, as proposed, would have been an inappropriate use of U.S. government property."



European Court of Human Rights rules denial of the Armenian Genocide falls under freedom of expression

The European Court of Human Rights (ECHR) ruled Dec. 17 that denial of the 1915 mass killings of Armenians as genocide falls under freedom of expression, following an appeal from a Turkish politician to his conviction in Switzerland.

The court, which upholds the 47-nation European Convention on Human Rights, said a Swiss law against genocide denial violated the principle of freedom of expression.

The ruling has implications for other European states such as France which have tried to criminalize the refusal to apply the term "genocide" to the massacres of Armenians during the breakup of the Ottoman empire.

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու և մանուկներու Քայքայիչացիք բուժում:
Գլխացու, վզի, մեջքի, յոզային և վրանային ցուրեր:
Ինքնաշարժի վրարի հետեանբով պատահած վնասուածքներու բուժում:
Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

Ten Events in Pictures from Armenia and Diaspora



SD Hunchakian party returns to Istanbul

A panel discussion focusing on the historical significance and consequence of “The Twenty” Social Democrat Hunchak Armenian activists hung in Istanbul’s Sultan Bayazid Square on June 15, 1915, took place at Istanbul’s “Jezayir” (“Algeria”) Hall on Thursday, June 13th, 2013. The event marks the first time since 1921, that such a remembrance of the “The Twenty” was marked in Istanbul. The panel discussion was organized by various Turkish human rights organizations, and Turkish intellectuals, and was the first of two events commemorating “The Twenty,” culminating with commemorations that took place at Sultan Bayazid Square (Bayazit Meydani) on June 15, at 3 p.m.



Newly elected Armenian Patriarch of Jerusalem inaugurated

The inauguration ceremony of newly elected Armenian Patriarch of Jerusalem His Eminence Archbishop Nourhan Manoogian was held in the Mother Cathedral of Saint James in Jerusalem on June 5th. The new Patriarch, accompanied by the bishops, moved to the major sacristy of the Mother Cathedral from the Patriarchate, where he knelt and recited his oath bareheadedly.

Archbishop Nourhan Manoogian was elected the Armenian Patriarch of Jerusalem on January 24. The patriarchal throne remained vacant since the former Armenian Patriarch of Jerusalem Rev. Archbishop Torkom Manougian passed away after long illness at the age of 93.



Karabakh conflict resolution process

On November 19, in Vienna, the presidents of Armenia and Azerbaijan, Serzh Sarkisian and Ilham Aliyev, met for the first time in almost two years. During the meeting some new proposals were apparently discussed. The talks



Louisiana State Senate recognizes Karabakh independence

The Louisiana branch of the Armenian Council of America (ACA) reported that the Louisiana State Senate passed a Senate Resolution 151 (SR 151) on Thursday, May 30, 2013 recognizing the Nagorno Karabakh Republic and expressing support to develop as a free and independent nation in order to guarantee its citizens those rights inherent in a free and independent society.

SR 151 was spearheaded by Louisiana State Senator Edwin R. Murray D-New Orleans who worked closely with ACA of Louisiana to ensure the resolution’s passage.

On November 15, 2013, Artsakh Republic President Bako Sahakyan signed a decree awarding the “Appreciation” medal to Vasken Kaltakjian, Chairman of the Louisiana chapter of the Armenian Council of America, and member of the Central Committee of Social Democrat Hunchakian Party for his effort to defend the self-determination rights of the people of Artsakh and for promoting international recognition of the Republic of Nagorno Karabakh.



Protest against Davutoglu visit to Yerevan

Activists from Social Democrat Hunchakian Party’s Sargis Tkhruni student-youth union, Armenian Revolutionary Federation Dashnaksutyun party’s Nikol Aghbalyan student and youth union, along with representatives of other opposition forces rallied on the morning of Thursday December 12 in front of Armenia Marriott Hotel to protest against Turkey’s Foreign Minister Ahmet Davutoglu who Thursday arrived in Yerevan to attend the 29th session of the Organization of the Black Sea Economic Cooperation (BSEC)

were confidential, but on the basis of available information experts assume that Russia and Turkey are promoting the project of opening the Turkish-Armenian border at the expense of Armenia’s concessions on two districts around Karabakh.

Meanwhile, during 2013 the Azerbaijani side has repeatedly violated the cease-fire, not only on the line of contact with the Nagorno-Karabakh Republic, but also on the border with Armenia.

www.massispost.com
daily news updated



HayastanInfo.net

Armenian U-Turn On EU

Continued from page 1

mostly reversed a 50 percent rise in the gas price, officially announced in April, shortly after Armenia decided to join the customs union. At almost \$190 per 1,000 cubic meters, it is currently well below international market prices. Armenian Energy Minister Armen Movsisian has claimed that Armenia could not switch to large-scale gas imports from neighboring Iran because the latter would charge it as much as \$400 per 1,000 cubic meters.

The Iranian ambassador in Yerevan, Mohammad Reisi, held two news conferences within four days early this month to effectively deny Movsisian's claims. Reisi implied that the Iranian gas price for Armenia might have been set lower than the current Gazprom tariff. The Armenian government has not even attempted to negotiate with Tehran over significant gas deliveries, he said.

Remittances sent home from Armenian migrant workers in Russia are a more important factor behind the Russian economic influence. They accounted for more than 80 percent of the \$1.7 billion in noncommercial cash transfers to the country in 2012, a sum equivalent to over 16 percent of its gross domestic product.

There were fears in Armenia that Moscow could seek to halt those remittances, including by deporting en masse Armenians working in Russia. But most of Russia's estimated 2 million-2.5 million Armenians are Russian citizens. The Russian Federal Migration Services puts the number of Armenian nationals who resided in the country as of October at around 500,000. Their mass deportation

would have been both politically and technically problematic. Even Georgian and Moldovan migrants have not been sent home in their thousands to date.

...Or Dangerous Enough?

Russia's strongest leverage against Armenia has to do with national security. The unresolved Nagorno-Karabakh conflict has forced the Armenian side to rely heavily on close military ties with Moscow, enabling it to receive large quantities of Russian weapons at knockdown prices or even free of charge, and thus stay in an intensifying arms race with oil-rich Azerbaijan.

It emerged in June that Russia has begun delivering \$1 billion worth of tanks and other offensive weapons to Azerbaijan. Putin raised Armenian fears of more such arms sales when he paid a high-profile visit to Baku in mid-August. Armenian pro-government politicians now say that the integration pact with the EU would have put the Russian-Armenian military alliance at risk and encouraged Azerbaijan to unleash another war for Karabakh. The implication is that the Russians threatened to end military aid to Armenia and sell more weapons to Azerbaijan.

Assuming that such threats were indeed made, they involved an element of bluff. Russia began selling weapons to Azerbaijan even before the start of the Armenia-EU association talks in 2010, and the recently disclosed Russian-Azerbaijani arms deliveries were reportedly signed in 2011. Besides, Russian arms supplies to Armenia intensified even when the Sarkisian administration was on course to conclude the Association Agreement.

Moscow is clearly not interested in

an Azerbaijani military victory in the conflict as it would leave the Armenians with no major reason to host Russian troops in their territory and to maintain broader Russian-Armenian military cooperation. The Association Agreement could in no way jeopardize that cooperation as it offered Armenia no prospect of eventual membership of the EU, let alone NATO. Gagik Minasian, a senior lawmaker affiliated with the ruling Republican Party of Armenia (HHK), emphasized this fact when he ruled out the possibility of Russian economic sanctions in an August 20 interview with RFE/RL's Armenian Service.

A Personal Angle

Sarkisian's subsequent efforts to make Armenia part of the customs union as soon as possible -- without the kind of haggling engaged in by Ukraine and even Kyrgyzstan -- raised more questions about the theory that his strategic U-turn stems only from regional geopolitics. "We are struggling to keep up with our Armenian partners," Putin commented tartly on the accession talks during a December 2 visit to Yerevan.

The gas-price discount is the only major Russian reward announced so far. Yet even it comes with a catch: unprecedented privileges granted to Gazprom in the Armenian energy sector. Russia has not even rescheduled a \$500 million debt extended to Armenia in 2009. The authorities in Yerevan repaid it in October with proceeds from the first-ever sale of Armenian eurobonds.

Sarkisian is giving the impression that he is keen to restore the Kremlin's trust, shaken by his European integration drive, at any cost and as quickly as possible. Concern for his power seems a plausible explanation for this tactic.

Sarkisian succeeded in neutralizing his political opponents during his first presidential term. But virtually none of them has recognized the legitimacy of his disputed reelection in February 2013 and ruled out the possibility of challenging him in the streets.

An open confrontation with Moscow could have emboldened some opposition forces, notably the Prosperous Armenia Party of Gagik Tsarukian, a wealthy businessman close to Sarkisian's predecessor, Robert Kocharian, who reportedly spends much of his time in Moscow. Some local observers believe that the Kremlin is also in a position to engineer mass defections from the ruling HHK's parliamentary faction.

The Armenian president does not need a powerful external enemy, especially now that he seems intent on extending his rule beyond 2018. The day after announcing his customs-union U-turn he formed an ad hoc commission on constitutional reform. The Armenian media has since been rife with speculation, not denied by presidential allies, that Sarkisian wants to turn the country into a parliamentary republic and become a powerful prime minister after completing his second and final presidential term, just as former Georgian President Mikheil Saakashvili sought unsuccessfully to do.

The Armenian Constitution can be amended only through referendums. Sarkisian will not find it easy to muster the support of at least one-third of the country's 2.5 million eligible voters needed for the passage of amendments. Any attempt to rig the referendum would most probably spark street protests and unite the fragmented opposition against him.

RFE/RL

ARGENTBANK



We are open for
business, and
here to wish you
happy holidays!

Concetta Smarius
Avo Markarian
700 N. Central Ave., Ste. 340
Glendale, CA 91203
818-844-2555

Donna Owen
Gary Ketenjian
16501 Ventura Blvd., Ste. 607
Encino, CA 91436
747-233-3500

Stacey Peterson
Richard Glass
2801 N Ventura Blvd. Bldg G
Oxnard, CA 93036
805-973-8540

BankWithArgent.com



Merry Christmas & Happy New Year
from Argent Bank 700 N Central Ave. #340 Glendale, CA 91203

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ, ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ, ՀՊԱՐՏ ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԻ ԳԱՆՁԵՐՈՎ Ռ. ԿՈՐԻԱՆ

Խորհրդային կարգերի փլուզումից, ահաւոր երկրաշարժի արհաւիրքից, Հայաստանի անկախացումից եւ Արցախեան պարտադիր պատերազմական տարիներից ի վեր մեր հայաստանաբնակ ժողովրդի համար տարիները ծանրօրէն թաւալել սկսեցին: Քսան երկու տարիներ անկախութիւնից յետոյ դեռ ժողովուրդը տրանջում է կեանքի պայմաններից: Շատ պատճառներ են թուարկուած՝ երկրաշարժ, պատերազմ, իշխանաւորների դատապարտելի սխալներ եւ... փակ ու շրջապատուած կենսական ճանապարհներ, պատերազմական կոչեր ու ոտնձգութիւններ: Ահա թեւակոխում ենք 2014 թուատարին անմխիթար պայմաններում, Հայաստանի բնակչութեան մէկ երրորդը, ով գիտէ դեռ աւելին, արտագաղթած լինելով գոյապրուստի պատճառներով:

Շատ-շատ ժողովուրդների համար 2013-ը եղաւ տառապալից եւ սարսափազդու կորուստներով, նաեւ՝ Սուրիոյ ժողովրդի համար ներառեալ մեր աշխատասէր հայութիւնը: Աշխարհը մնաց տաքնապալից՝ պոստհոլոքստ արեւը մէջ, անկախ եւ ազատ ապրելու ժողովրդական ընդվզումներ, կեանքի եւ գոյապրուստի պայքարներ, անարդարութիւնների եւ բռնութիւնների դէմ մասսայական բողոքներ եւ ցույցեր, ահաբեկչական արիւնահեղութիւններ, միով բանիւ՝ յուզումներ եւ ալեկոծումներ: Հայաստանն եւս անմասն չմնաց ժողովրդական յուզումներից մղուելով սոցեալական կեանքի անգոհ վիճակից:

Յոյսերով եւ խոստումներով ճամբայ ելած գնացքը իր վերջակէտին է հասնում, ապաստիւքներ եւ ցանկութիւններ մնացին անկատար: Արտագաղթը կանգ չառաւ, հայրենիքի եւ իրենց տներին կարօտ արտագաղթեալները վերադարձի ճամբան գտան անյոյս, որոնք շարունակեցին ապրել կարօտով հայեացքը երկրին՝ նիւթական օգնութիւններ առաքելով իրենց հարազատներին:

2013-ը նաեւ բաւական մեծ դժուարութիւնների պատճառ դարձաւ հայաստանցի գիւղացիների համար բնութեան բերած տարեբքի աւերածութիւններով: Գիւղացուն պէտք է պաշտպան կանգնել, ապահովութիւն ստեղծել, որպէսզի նա հանգիստ ու խաղաղ մտքով, ապագայի վառ յոյսերով իր վար ու ցանքսը անի, հողին ուժ տայ, որ-

պէսզի հողն իրեն բերք տայ, կեանք տայ եւ այդ առողջ կեանքին մասնակից դարձնի իր երկրացիներին:

Հայաստանի գիւղատնտեսութեան զարգացումը Հայաստանի հզօրացման ճամբի երաշխիքն է, խոպան հողերը մշակել տալ, աննպատակ, դէպի օտար ափերը, հոսող ջրերը կենտրոնացնել: Հայրենի հարստութիւնները թալանող եւ օտար երկրներ տանող կողպատիչների ձեռ-



քերը կրճատել եւ ուժ տալ ներքին արդիւնաբերութեան:

Փափաքում էինք արդարութեան թեւածում ոճրագործին մահակախաղան, արդարին պաշտպանութիւն: Ով է եւրօտորհուրդը, որ օտար երկրների համար օրէնք է սահմանում, նրանց օրէնքները Հայաստանի պէս երկրներին ի նպաստ իրենց ձգտումներին տարած քաղաքականութիւն է: Արդարեւ Հայաստանում, այդ պոռնուր երկրում, օրական որքան սպանութիւններ են կատարուած, որը աւտօ վթարներով, որը կրակոցներով, որը խուլիզանական յարձակումներով, ո՞վ է պատասխանատուն այս բոլորի... Չարագործին խտապոցնա պատիժ պէտք է, ապա կը տեսնես խաղաղ եւ օրինաւոր կեանք արտասահմանեան ներդրումների համար:

Սպասում էինք մեր եկեղեցու դէմ աղանդաւորների քանդիչ ու ապականիչ եւ անկաշկանդ աշխատանքների առաջը կ'առնուի, միասեռութեան վատահամբաւ անունը կը ջնջուի, հազար անգամ ամօթ է մեր պէս հին եւ հարուստ մշակոյթով ժողովրդի մէջ այդպիսի ոչ մարդկային բարոյաշեղ արարքի մասին թոյլ տալ, ասուի կամ խօսուի, կամ այդ օտարամոլ աղանդներին ազատ քարոզչութեան առիթ տալ որ հաւաքատեղի ունենան:

Ակնկալում էինք հայ մշակոյթ-

թի եւ հայ լեզուի տիրապետութիւն բոլոր բնագաւառներում, բայց արի ու տես՝ ուռսալեզու բառերի տարածման մէջ եւս սուսկի պէս աճում են՝ տարբեր լեզուների բառակապակցութիւնների գործածութիւնը առօրեայի խօսակցական լեզուում եւ հաղորդումներում: Դէմ չենք օտար լեզուների ուսուցման եւ իւրացման: Յարաբերութիւնը, շփումը փոխադարձ սիրոյ եւ յարգանքի առումով



ժողովուրդներին իրար է մօտեցնում միջազգային խաղաղութիւնը ամրապնդելու համար, բայց դէմ ենք ի վնաս մեր մշակոյթի եւ ոսկեղնիկ լեզուի աղաւաղման որոշ գլոբալիզացիայի, ներկայացումների եւ թոյլութիւնների հետ:

Տարին բոլորուեց ցաւալի կորուստներով, կորցրեցինք արժանաւոր մարդիկ՝ էդուարդ Միրզոյեան, Ալեքսանդր Յարութիւնեան, Յովհաննէս Գրիգորեան, Ազատ Գասպարեան, Սօս Սարգսեան, Լեւոն Գ. Մինասեան, Դր. Մեսրոպ Բալայեան, Արամայիս Սահակեան, Լեւոն Անանեան, Օֆելիա Մարտիրոսեան եւ ուրիշներ: Արուեստագէտ, մտաւորական, գրող, բանասէր եւ այլն կորցնելը ծանր է նստում մեր նման ժողովուրդների համար:

Լեւոն Անանեանը որպէս Հայաստանի Գրողների Միութեան նախագահ արժանաւորապէս տաս տարի ղեկավարեց միութիւնը: Ուրախ ենք, որ կարող մէկը՝ բանաստեղծ էդուարդ Միլիտոնեանն է փոխարինում նրան:

Հայաստանի գրողների եւ Սփիւռքի գրողների ի մի լինելու դէմ բարբառանքները թող լռեն, հայրենի եւ Սփիւռքի գրողները մէկ են ինչպէս Հայաստան եւ Սփիւռք ոսկէ կամուրջով միացած՝ արդար իրաւունքներով օգտակար եւ օգնական:

2013-ը ընտրութիւնների տարի էր, վերընտրուեց նախագահ Սերժ Սարգսեանը: Ընտրութիւնը անընդունելի յայտարարուեց նրա մրցակից՝ Ռաֆֆի Յովհաննիսեանի միջոցով, եղան բողոքներ եւ ցույցեր:

Հայաստանի իշխանաւորների ոչ սրտցաւ եւ ոչ նախանձախնդիր քաղաքականութեան հետեւանքով է Հայաստանը այս օրին հասել: Ուր որ անարդար ընտրութիւններ կատարուեն, լաւ իմացէք, որ երկիրը դէպի նեխացում եւ փտացում է գնալու: Ժողովուրդը տուժելու է, երկիրը դառնալու է վասալ օտարներին:

Անցնող տարուայ ընթացքում եւս Արցախը մնաց լրատուական թէ՛ժ դաշտում: Արցախի նկատմամբ Ատրպէյճանի պահանջները անհիմն են ու անընդունելի, Արցախը հայկական տարածք է դարերի խորքից փաստագրուած, հազարաւոր նահատակների արեամբ ազատագրուած հողերը պապենական են եւ ոչ վերադարձնելիք, Արցախի գոյութիւնը Հայաստանի գոյութիւնն է, որեւէ այլ մտածում հաւասար է հայ ժողովրդի կորստեան: Որեւէ զիջում ազատագրուած տարածքներից մեր իշխանաւորների խեղճութեան, անհեռատես քաղաքականութիւնն է ապացուցելու, որը կ'օգտագործուի հայահալած թշնամու կողմից եւ հետագային կը դառնայ հայութեան համար փորձանք:

Մեր հարեւան պետութեանց դարաւոր ցանկութիւնը եղած է հայ ժողովրդին ոչնչացնել կամ ձուլել եւ գրաւել Հայաստանը, շատ են պատմական փաստերը: Ամենասուկալի փորձը 1915-1923 թուականների կոտորած-Ցեղասպանութիւնն էր մեր Արեւմտեան Հայաստանի բնակչութեան կատարուած թուրքիոյ միջոցով, զոհ գնացին մէկ ու կէս միլիոնից աւելի անմեղ հայեր: Արիւնարբու թշնամին նպատակ ունէր Արեւելեան Հայաստանն եւս գրաւել եւ ժողովրդին կոտորել, սակայն հերոսական կռիւներից թշնամին խայտառակօրէն պարտութիւն կրելով նահանջեց: Արդէն մօենում ենք Ցեղասպանութեան հարիւրամեակին, որը անժամանցելի է եւ պահանջատիրութիւնը անսակարկելի: Ցեղասպանութեան ճանաչեցման ճամբին տարուած ու կատարուած աշխատարուած

Շաբ.ք էջ 20

ՄԱՍԻՍ - 2014

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ, ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ, ՀՊԱՐՏ ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԻ ԳԱՆՁԵՐՈՎ

Շարունակում էք 19-էն

տանքները հետզհետեւ արդիւնաւորւում են դատաւարտուելով աշխարհի մի շարք պետութեանց կողմից: Պայքարը աննկուն շարունակուելու է մինչեւ ցեղասպանը ընդունի իր ոճրագործութիւնը եւ կատարի հայ ժողովրդի պահանջները:

Այս տարի եւս տեղի ունեցաւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի 16-րդ թեւեթոնը Նոյեմբերի 28-ին, ԱՄՆ-ի գոհաբանութեան օրը հեռուստամարաթոնային խանդավառ եւ ոգեւորիչ ծրագրով: Այս տարուայ հանգանակուած գումարը՝ 22,661,372 դոլար պիտի յատկացուի Արցախին՝ վարդենիա-Մարտակերտ ճանապարհի 116 կմ շինարարութեան համար: Թեւեթոնին մասնակցելու քաջալերանքով ներկայ էին գտնուել՝ Արցախի նախագահ՝ տիար Բակօ Սահակեանը եւ Արցախի առաջնորդ՝ Պարգեւ Արք. Մարտիրոսեանը: Ամբողջ օրը՝ առաւօտուայ ճից - երեկոյան ծրագրով ներկայացուած ու արտայայտութիւններ, երգ ու երաժշտութիւն եւ ծրագրերի իրականացման տեղեկութիւններ: Հետաքրքիր էր աշակերտական խմբերի էկրան ներկայանալը, նրանք իրենց ուսուցիչներին ներշնչած բառերով առաւել ոգեւորութիւն պարգեւեցին մեզ դիտողներին իրենց ներկայանալի դարձնողական տարազներով եւ արտայայտութիւններով: Թող չիշենք նրանց խօսքերից պատուիրկներ՝

- Հպարտ եմ, որ կը մասնակցիմ թեւեթոնին, հայը ուր էլ ապրի պիտի օգնի հայրենիքին եւ Արցախին:
- Հայաստանը կը գործնայ նաեւ Սփիւռքի միջոցով:
- Ես պիտի փաստաբան դառնամ Հայաստանի համար:
- Ես այստեղի աշակերտ եմ, նաեւ կը սիրեմ Հայաստանի աշակերտները:
- Ես զինուոր պիտի ըլլամ հայրենիքս համար:
- Կ'օգնեմ ճանապարհ կառուցուի, որպէսզի այդ ճամբով ամէն հայ Արցախ գնայ:
- Ամէն հայ կրցածին չափ թող հայրենիքին օգնի:
- Կարծեմ մեկնաբանելու կարիք չկայ, ամէն ինչ պարզ է, սա է սփիւռքահայի անբիծ հայրենասիրական հոգեբանութիւնը: Թեւեթոնը լաւ է, թող շարունակուի, օգնութիւն եւ սպասելիքը պատասխանատուութեան իմաստով է հաղորդում, հայրենասիրական ոգի է ներշնչում: Թող կազմակերպիչները զեղարուեստի բաժինը առաւել ճոխացնեն բարձրարուեստ հնչեղութեամբ՝ երգարուեստի գողտրիկ եւ հրապուրիչ կտորներով, նաեւ առաւել ճոխացնեն աշակերտական մասնակցութիւնը:

Սփիւռքեան հայապահպանման անմխիթար վիճակը բոլորիս պարտաւորացնում է ճշգրիտ ու հեռատես ծրագրաւորումներով նուիրուէնք մեր մատաղ սերնդի հայցի դաստիարակութեան՝ առաւել չափով մեր երիտասարդ ընտանիքները, որոնք աւելի զգոյշ եւ ուշադիր պիտի լինեն այս հայակերտման հարցում: Մեծ պարտականութիւններ ունեն մեր Առաջնորդարանները, միութիւնները, մամուլը, ծնողական խորհուրդները, ուսումնական հաստատութիւնները եւ ազգային մարմինները: Եթէ հայ երեխան տնում, փողոցում եւ դպրոցում հայերէն չի խօսում կտրուելով ազգային արժէքներից ո՞վ է յանցաւորն ու մեղաւորը...

Տարին նոյն ժամանակն է՝ կաղապարուած, բայց անսահման, անսկիզբ ու անվախճան, իսկ մարդը՝ սահմանափակ, սակայն մարդն էլ կարող է անմահ լինել իր հայրենանուէր, ժողովրդանուէր, մշակութանուէր ծառայութեամբ եւ գործով: Մարդը կոչուած է իրեն սահմանուած ժամանակում կեանքը վայելել եւ արժանի գործ անել իր նմանի, իր հայրենիքի եւ իր ժողովրդի համար: Ուրեմն վերընձիւղուած սիրալատ հոգով ու սրտով եւ ծառայասիրական ոգով դիմաւորենք 2014 թիւը, որպէսզի ապրենք խաղաղ ու արդիւնաւէտ կեանք՝ արժանին արժանուն տալու եւ անառակին ճիշտ ճանապարհը առաջնորդելու:

Նոր յոյսերով ու նոր ցանկութիւններով ընդառաջ գնանք նոր բացող 2014 տարուան, ուրիշ ինչ կարող ենք ասել, յոյսն է, որ ապրելու, արարելու մղում է առաջացնում, ուստի մեր հայեացքը դէպի գալիք պապան, սպասելով Հայաստանի իշխանաւորները անցեալ քսան երկու տարիների փորձառութեամբ գտնուողուած խելամտորէն վերացնեն նախկին սխալները եւ աւելի զգօն, աւելի նուիրուած Հայրենիքի եւ Արցախի հօ-

ԱՄԱՆՈՐԵԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ռ. Կորիւն

Նոր տարուայ նախաշնորհները կանգնած, Դիմը մեկնելու վրայ է՝ յուշը ետ, նա այնքան էլ չի վազում, ժամկէտին է սպասում, նա յամենում է տարին բոլորի, կծիկը աւարտին հասցնի, կամենում է վերջում՝ սպիտակով նախշեր կծկի, սակայն անօգուտ, քանի որ կարմրադեղին գոյնը արդէն մատնում է նրա էութիւնը: Ինչ յոյսերով էինք օրօրում հինի կապուած... ցանկութիւններ պէս-պէս՝ խաղաղութիւն աշխարհին, բարգաւաճում երկրներին, ապահով կեանք մարդկութեան, պատերազմներից հրաժարում, արդարութեամբ տնօրինում, իրաւագրկուած ժողովուրդների պահանջներին վերահասութիւն, պատմական սխալների ճշտում, հայութեան հարցի լուծում, ցեղասպան թուրքիայի դատաւարութիւն, ինչ վսեմ սպասելիքներ, մեր մոլորակը գեղեցկացնող՝ բուրաստան գունակ-գունակ ծաղիկներով: Բայց որ մէկն է իրականացել, ամէն ցաւ անբուժ է մնացել, պայքարներ ամենուրեք, գեր մեծերն իրենց կամքն են թելադրում, նրանք վերից են նայում, տկարին են օգտագործում: Քանի բեւեռացումը, սպառնալիցումը, գոռոզութիւնը եւ ընչաքաղցութիւնը տիրակալ են՝ ոչ տեսնենք արդարութեան աղաւնութեամբ: գիտուն մարդիկ են դա ասում, նրանք են, որ ժողովրդասիրու-

թեամբ եւ հայրենասիրութեամբ պահում են աշխարհը քարքարի վրայ: Նրանք երբեք չեն յուսահատուում, խոհեմաբար եւ համբերատարութեամբ են առաջ գնում, բարի խորհուրդներով են հրապարակ իջնում՝ հոգու եւ մտքի նորոգութեան, շրջահայեցողութեան, կարեկցութեան, ժողովրդասիրութեան, հանդուրժողականութեան եւ... մէկնգնէկու նկատմամբ սիրոյ եւ յարգանքի զգացումներով: Ահա Ամանորն է գալիս առաքինի, տեսնենք այս տարի ինչ կը կատարուի, Յոյս Աստուծոյ յուսախափ չենք լինի: ** * Դրածեշտ եմ տալիս գնացող տարուն, Անցնում եմ անտարբեր մտքով աննկատ, Ինչպէս անցնում եմ անպտուղ ծառի մօտից, Սպասելիքներ շատ մնացին անկատար: Զեղածի համար ոչ մտածում եմ, ոչ տրտմում, Թերացումը պէտք է փնտրել արարքներում, Անճարակութիւնը կեանքի ոլորտներում, Որը մեզ դէպ ձախողանք է առաջնորդում: Պէտք չէ ահ զգալ մտքերով մութ ու մոլոր, Ամէն ձախողանք նոր ճամբայ է բացում, Փորձ է կուտակուում նոր մտքերով լուսաւոր, Ապա մեզ դէպ յաջողութիւն ուղեկցում:

րացման, ժողովրդի բարօր կեանքի, մեր ազգային արժէքների պաշտպանութեան, մշակութի անաղարտութեան եւ ազգային ու հայրենասիրական գաղափարախօսութեան քարոզչութեան գործունէութիւն ծաւալեն, ծառայութիւն մատուցանեն յանուն հայ ժողովրդի պայծառ ապագայի:

Եկէք բոլորս միասնաբար մէկգնէկու շնորհաւորենք Ամանորը եւ Ս. Ծնունդը, իրար մաղթենք եւ ցանկանանք լաւն ու բարին, այն ինչ որ չի կատարուել 2013 տարեթիւում, թող կատարուի գալիք տարում մեր կեանքի համար, հայրենիքի համար, ժողովրդի համար եւ մշակութի համար:



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ԼՈՒՍԻՆ ՊՈՅԷՄԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2014

ՄՏԵՓԱՆ ԱԼԱՃԱՃԵԱՆԻ ԾՆՆՌԻՆԻՍ

90 ԱՄԵԱԿ

Լիւսի Միւլաքեան

«Օտարութեան մէջ ապրելով մարդու հայրենասիրութիւնը չի նուազում, երբեմն հայրենիքում ապրիլն է նուազեցնում հայրենասիրութիւնը...»

Ստեփան Ալաճաճեան

Ստեփան Ալաճաճեանի այս խորհրդածութիւնը հարազատ է սփիւռքահայր սրտին... Սփիւռքահայ էր Ստեփան Ալաճաճեան «Երազային Հայկա»ի ծնունդ: Հայ հոգեւոր մշակոյթի օճախ, ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ վարժարանին մէջ ստացաւ հայեցի իր կրթութիւնը, ապա անցաւ Ամերիկեան «Ալեքսիոս Գոթեմ» ու շարունակեց իր ուսումը Պէյրութ «Ամերիկեան համալսարան»: Գրական իր տաղանդը կայծակաբար ծննդապալար հայկալի մէջ եւ իր առաջին գիրքը «Վշտի ծաղիկներ» լոյս տեսաւ տպարան Տիգրիս, 1942ին: Հայկա:



ժանացած է պատիւներու հայրենիքի եւ սփիւռքի մէջ:

Ստեփան Ալաճաճեան 1992-ին փոխադրուեցաւ Լոս Անճելոս առողջական վիճակին պատճառաւ եւ երկար տարիներու իր կեցութեան ընթացքին Ալաճաճեան գրողը իւր դատեր թերեզա Ալաճաճեան Հայրապետեանի հիմնադրած ԱՌԱԳԱՍՏ ամսագրի մէջ ընթերցողին յանձնեց Հայրենի ներաշխարհի, անցեալի միջնալոյսերը:

Յուշագրեց անաչար կերպով, չմեղադրեց... «Յուշագրութիւններս անցեալը քննելու փորձ չէ: Փակ ուղղութիւնը չեմ բացում, չեմ յայտնաբերում անյայտը: Փորձում եմ հարուածը գրել իմ տեսածի, իմ անկցածի պէս»: Այո՛, մոլթն աւելի շատ էր, բայց կար նաեւ լոյս, թէեւ տմոյն ու անբաւարար բայց միջնալոյս, եւ մենք այն միջնալոյսի մէջ... «Եղիցի լոյս» Պ.Ս. «Գրի առածներս գեղարուեստորէն շարադրելու մի փորձ է սա. Բայց այնպէս չստացուի, որ ժամանակին լուի եմ եւ այդ լուսութեան փոխարէն այժմ եմ ձայն հանում, այսինքն իմ լուսութեան մեղքն եմ քաւում» կը գրէ Ալաճաճեան: «Ես միայն ուզում եմ ասել որ ապրեցիք տառապեցիք, բայց նաեւ արարեցիք»:

Ալաճաճեանի համար «Հայ դպրութեան ծառայելը ժողովրդի գոյատեւման ծառայել է»:

Լոս Անճելոս ԱՌԱԳԱՍՏ-ի ասաթերթի իմ բազմութեան լուսաւոր գրասենեակը եղաւ իր յուշերուն ծնունդ տուող ջերմաջերմ բոյնը, ուր կրցաւ երկնել այնքան հետաքրքրական հայրենի իր յուշերու հոյլը, եւ լոյս աշխարհ բերաւ

ՆՈՐ ՏԱՐԻ

Տարին ժամանակի սահմանն է, որ բնութենէն առնուած է: Ասիկա այն ժամանա կաշրջանն է, որու ընթացքին Երկիր մոր ընկալած ամբողջական պտոյտ մը կը գործէ Արեգակին շուրջ: Երկիրն շրջապտոյտը հաւասար է 934 միլիոն քիլոմետրի, որ մեծ արագութեամբ կ'անցնի: Յիշենք, որ մէկ վայրկեանի ընթացքին 30 քիլոմետր կ'անցնի:

Տարիի գաղափարը առաջին անգամ ծագած է Հին Արեւելքի մշակութային կեդրոններէն՝ Եգիպտոսի մէջ եւ կապուած է Նեղոսի վարարումին հետ: Ատով կը պայմանաւորուէին եգիպտացիներուն կեանքը, առօրեան, երկրագործական աշխատանքները: Նեղոսի վարարման սկիզբը կը գուգադիպէր Սիրիոս աստղի երեւումին: Եւ ահա, այդ աստղի եւ Նեղոսի վարար ման միջեւ եղած ժամանակաշրջանն ալ կոչուեցաւ ՏԱՐԻ:

Հակառակ այն փաստին, որ տարի հասկացութիւնը ծնած է Հին Եգիպտոս, այսինքն այն ժամանակէն ի վեր, երբ սկսաւ գոյութիւն ունենալ թուականը, տարբեր ժողովուրդներ տարբեր ամիսներ ընդունած են որպէս տարուան առաջին ամիս, հետեւաբար տարբեր եղած են անոնց Նոր Տարիները:

Այսպէս, օրինակ, հին պարսիկներու նոր տարին կը սկսէր գարնան օրահաւասարին եւ կը կոչուէր «վարդի եւ գինիի» օր: Յետագային այդ օրը ընդունուեցաւ իսլամական աշխարհի կողմէ եւ ստացաւ «Նովրուզ» անունը, որ այսօր ալ մեծագոյն շուքով կը նշուի: Ռուսերը Նոր Տարին Սեպտեմբեր մէկին կը նշին, անգլիացիները՝ Մարտ 26-ին, իսկ Ֆրանսայի մէջ կը գուգադիպէր Զատիկի

տօնին: Հայերուն տարուան առաջին ամիսը Օգոստոսն էր եւ կը կոչուէր Նաւասարդ:

Այսպիսի բազմազանութիւնը դժուարութիւններ կը ստեղծէր ժողովուրդներու տնտեսական եւ մշակութային փոխ յարաբերութիւններուն մէջ: Ուստի 16-րդ դարավերջէն (1582 թուական), որոշուեցաւ Նոր Տարուան սկիզբը համարել Յունուար մէկը: Ահա այդ թուականն ալ կազմեց մեր ներկայ օրացոյցին հիմքը:

Տարեգրութեան մէջ, ժամանակի ընթացքին երկու տոմարներ ստեղծուած են, որոնք հիմնուած էին աստղաբաշխական հաշիւներով վրայ: Անոնցմէ մէկը Հին կամ Յուլեան տոմար կը կոչուէր, միւսը՝ Նոր կամ Գրիգորեան:

Նոր տոմարը առաջարկուեցաւ Հռոմի պապ Գրիգոր 13-րդի կողմէ, Յուլեան օրացոյցի փոխարէն: Երկու տոմարներու մէջ տարբերութիւնը տասներեք օր է:

Այսպիսով, Յունուար մէկը Նոր Տարուան սկիզբը համարելը պատմական իրադրութեան հետ չի կապուի եւ ընդունուած է պայմանականօրէն, բայց ժամանակի ընթացքին աւանդոյթի ուժ ստացած է: Յիշեալ օրը, որ այսօր բոլորիս համար այն քան հարազատ ու անփոխարինելի դարձած է, յարաբերաբար նոր պատմութիւն ունի:

Հակառակ անոր, որ Յունուար մէկը միջազգային չափանիշերով պաշտօնապէս ընդունուած է որպէս

Նոր տարի, բայց Միջին եւ Մերձաւոր Արեւելքի կարգ մը երկիրներու մէջ (Իրան, Աֆղանիստան, քանի մը արաբական երկիրներ) կը շարունակեն պահպանել իրենց աւանդական Նոր Տարին:

վերջնագոյն իր «կարապի երգերը»: «Ալաճաճեան կը հաւատայ որ հայ ազգը, ունի եւ պահպանում է այն ոգին որ կոչուում ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻ գիտակցական ազգային կեցութիւն: Ան կը փաստարկէ որ ճշմարիտ հայ մտաւորականը բունատիրութեան տակ անգամ որդեգրել է իրեն ազատ գալու եւ ստեղծագործելու ձեւը, այսինքն ներաշխարհի ազատութիւնը»:

«Ժամանակակից հայ գրականութեան պատմութիւնը վկայագրող այս համեստ այլ մեծ գրողը, պատկառելի գրական իր վաստակով, մեր օրերու Հայ Իրականութեան ԶԱՅՆ է, մարդկայնական խորունկ դրսեւորումներով եւ իւրապատկ իր մտածելակերպով: Հան-

դարտ, խորասուզ, յամառ աշխատանքով, հոգեկան եւ մտաւորական ինքնութեան կառուցն իր կազմաւորուած հայրենի հողի ծոցը շքեղօրէն ի յայտ կուգայ գեղարուեստական իր երկերուն մէջ: Զգօն աշխարհայացքի եւ հանդուժողական ներողամիտ ոգիովն Ստեփան Ալաճաճեան մեր օրերու ԻՐԱԻ ՀԱՅՈՒ պայծառ դիմագիծն է»:

ՄԱՀՈՒԱՆ ԲՕԹԻՆ ՈՂՋԵՐԹԻ ՎԵՐԵԻԻ ՏՈՂԵՐՈՎ ԱՐՏԱՅԱՅՏԱԾ ԷԻՆՔ, ԽՈՐ ՎԻՇՏՈՎ ՇԱՂԱԽՈՒԱԾ ՄԵՐ ԳՆԱՀԱՏԱՆՔԸ ... ԱՅՍՕՐ ԻՐ ԾՆՆՌԻՆԵԱՆ 90 ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ ԿՈՂՋՈՒՆԵՆՔ ԶԻՆՔ ՅԵՏ ՄԱՀՈՒ ԵՒ ՆՈՅՆ ԱՆԿԵՂԾ ՀԱՄՈՉՈՒՄՈՎ ԵՒ ՍԻՐՈՎ ԻՐ ՊԱՅԾԱՌ ՅԻՇԱՏԱԿԸ:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿԱՐՕ ԵՒ ԱՆԻ ՊԷՔԱՐԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2014

ԿԵՆՏՐՈՆ՝ ՆՎԻՐՈՒԱԾ ԱՆԻԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԿՐՈՂՆԵՐԻՆ

Ռուսիայի հայոց թեմն առանձնանում է ոչ միայն իր բազմադարեան պատմությամբ, այլև Արեւելեան Եւրոպայի հայ եկեղեցական կառուցում եւ հայկական համայնքների շարքում իր ունեցած կարեւոր դիրքով, ինչպէս նաեւ ռուսիական միջավայրում ստեղծուած կամ աչտեղ պահուող եկեղեցական արուեստի գործերի մեծաթուլթեամբ ու բարձր արուեստով:

14-րդ դարի երկրորդ կէսին, երբ Լուովը թեմական կենտրոնն էր Արեւելեան Եւրոպայի մի շարք երկրների համայնքներն ընդգրկող մի մեծ թեմի, վերջինիս կազմում 1388թ. յիշուած է նաեւ Սուչավան Սեչով անուամբ՝ Թէոդորոս Բ. Կիլիկեցի կաթողիկոսի մի կոնդա-



րացման կամ նուագման վրայ:

Մեծ ընդհանրութիւն կայ Ղրիմի, Նոր Նախիջեւանի, Ուկրաինայի, Լեհաստանի, Հունգարիայի ու Մոլդովայի հայութեան եւ ռուսիական հայութեան միջեւ: Նրանք բոլորն իրենց համարում են անեցիների ժառանգները: Ահա այս պատճառով այս երկրների հայութեան կեանքի եւ սովորութիւնների մասին եղած տուեալները լրացուցիչ նիւթ են մատակարարում ռուսիական հայերի կենցաղի ուսումնասիրմանը:

Ելնելով այս ընդհանրութիւնից եւ հաշուի առնելով հայ-ռուսիական միջավայրի գիտական ներուժը, վաղուց հասունացել է Բուխարեստում Արեւելեան Եւրոպայի հայկական համայնքների ուսումնասիրման կենտրոնի ստեղծման հարցը: Վերջինիս գործունէութեան նպատակը պէտք է լինի այս երկրների հայութեան, որպէս անիական ակունքներից սերուած մի ամբողջութեան պատմութեան, մշակույթի, ազգագրութեան եւ բանահիւստութեան, տեղային խօսուածքի եւ գրականութեան համակողմանի ուսումնասիրութիւնը:

Նման կենտրոնի ստեղծմանը Ռուսիայի հայոց թեմի շրջանակում ձեռնամուխ եղանք մենք՝ պայմանաւորուած հետեւեալ երկու գլխաւոր պատճառներով.

1. Ինչպէս յայտնի է 16-17-րդ դարերից սկսած Արեւելեան Եւրոպայի եկեղեցա-թեմական կենտրոնը Լուովից աստիճանաբար փոխադրուած է Սուչավա եւ ռուսիական հայոց թեմը սկսում է կենտրոնական դեր խաղալ Արեւելեան Եւրոպայի ազգային-եկեղեցական կեանքում:

2. Ռուսիական հայոց թեմն է այսօր ժառանգորդը, կենդանի կրողը եւ պահպանողը ոչ միայն Ռուսիայում, այլև հարեւան երկրների հայ համայնքների մշակութային ժառանգութեան մի որոշակի մասի:

Ռուսիայի հայոց թեմի իրաւասութեան ներքոյ են գտնուում Բուխարեստի, Սուչավայի եւ մի շարք այլ քաղաքների հայկական եկեղեցիները, եւ այդ բնակավայրերի գերեզմանատների հայկական պատմական հատուածները:

Ամենօրեայ եկեղեցական սպասաւորութիւնը հնարաւորութիւն է ընձեռում մեր հոգեւորականաց միջոցով կազմակերպելու եկեղեցիների ճարտարապետական յորինուածքների, բեմային իկոնոստասի, վիմական արձանագրութիւնների, այդ թւում եւ գերեզմանների ու տապանագրերի ուսումնասիրութիւնը եւ վերծանումը:

Թեմի գործող երկու վանքերում եւ տարբեր եկեղեցիներում խնամքով պահոււմ են բազմաթիւ սրբանկարներ, եկեղեցական սպասքի առարկաներ եւ հանդերձներ, որոնք նաեւ արուեստի ստեղծագործութիւններ են, իսկ նրանց արձանագրութիւնները կարեւոր սկզբնաղբիւրներ են ռուսիական հայութեան եւ շրջակայ երկրների հայ համայնքների պատմութեան:

Հայ սրբանկարչութեան եւ ընդհանրապէս եկեղեցական արուեստի պատմութեան ուսումնասիրման համար առանձնակի կարեւորութիւն ունեն ռուսիական եկեղեցիների Աւագ խորանների իկոնոստասները:

Հայ եկեղեցիներին ոչ բնորոշ

իկոնոստասի Տէրունական պատկերաշարը այս եկեղեցիներում ստեղծուել է հայկական ոճաւորմամբ եւ պատկերազրական աւանդույթով: Իկոնոստասները թէեւ պատկերում են Տնօրինական դրուագները եւ Տիրոջ շարժարանները, ռուսիական հայոց եկեղեցիներում, սակայն, աջ եւ ձախ կողմերի եզրային պատկերները ազգային թեմաներով են, որոնք պատկերում են յատկապէս Ս. Գրիգոր Լուսաւորչին որպէս համաքրիստոնեական սրբի եւ Սրբոց Թարգմանչաց:

Ռուսիական մշակութային ժառանգութեան մի նշանակալից մասը, սակայն, պահոււմ է Ռուսիական թեմի ազգային առաջնորդարանի թանգարանում: Երկրորդ աշխարհամարտի դժուարին շրջանում՝ 1942թ. այն կառուցուել է Յովսէփի եւ Վիկտորիա Տուտեանների նուիրատուութեամբ եւ կրում է մեծանուն բարերարների անունը: Այս թանգարանն, իսկապէս, հայ եկեղեցական արուեստի մի մանրակերտը կարելի է համարել, ուր ներկայացուած են հայ հոգեւոր մշակույթի գրեթէ բոլոր բնագաւառների գործերը: Վերջիններս արտայայտութիւնն են ռուսիական եկեղեցական բազմադարեան կեանքի եւ բաժանուում են երեք խմբի.

ա. Ռուսիայում հայ վարպետների կողմից պատրաստուած, որոնք ունեն նաեւ հայերէն նուիրատուական եւ պատրաստման արձանագրութիւններ:

բ. Բերուած են արեւմտահայ միջավայրից աչտեղ գաղթած հայերի կողմից:

գ. Նուիրատուութիւններ՝ այլեւայլ երկրներից եւ, յատկապէս, Արեւելեան Եւրոպայի հայկական եկեղեցիներից բերուած:

Ռուսիայի հայոց թեմի եկեղեցական ու մշակութային ժառանգութիւնը ունի հետեւեալ հարստութիւններն ու դրսեւորման արտայայտութիւնները՝

Ա. Հայկական վանքեր եւ Եկեղեցիներ

Բ. Ռուսիական ճարտարապետութեան հայկական ազդեցութիւնը

Գ. Որմնանկարչութիւն

Դ. Վիմական արձանագրութիւններ եւ տապանաքարեր

Ե. Զեռագրային հաւաքածու եւ կոնդակներ

Շարք էջ 30

Advertisement for 'Մ.Գ.Հ.Կ. ՓԱՐԱՄԱԶ ՄԱՄՆԱՃԻՒԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԽՈՐԷ ԲՈԼՈՐ ԸՆԿԵՐ-ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ' (M.G.H.K. PHARMAZ MAMNADHIDU KY SHORHAKHORE BOLOR ENKERE-ENKEROUKHINEROU ET HAYAMAYEN HAY ZHOLVOVORTI NOR SARIN ET S. DZNOUNDU) featuring a Christmas tree with ornaments.

ՄԱՍԻՍ - 2014

ԿԵՆՏՐՈՆ՝ ՆՎԻՐՈՒԱԾ ԱՆԻԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԿՐՈՂՆԵՐԻՆ

Շարունակուած էջ 29-էն

Զ. Հնատիպ գրքեր է. Եկեղեցական սրբանկարներ Ը. 300 տարուայ հարուստ ազգային արխիւ

Թ. Հայկական Գորգերի հաւաքածու

ԺԱ. Կնիքներ եւ գինանշաններ ԺԲ. Յակոբ Սիրունու արխիւը ԺԳ. Ծիսա-արարողական՝ եկեղեցական առարկաներ

1. Եկեղեցական զգեստներ, սաղաւարտներ եւ վականների հաւաքածու

2. Եկեղեցական վարագոյրներ

3. Արծաթեայ իրեր եւ ապասք:

Առաջնորդարանում պահուող թեմի արխիւը կարեւորագոյն սկզբնաղբիւր է ուսմինահայութեան վերջին երկու-երեք հարիւր տարիների պատմութեան: Այստեղ պահուող ծիսական մատենաները վիճակագրական տեղեկութիւններ են տալիս Ռուսիայի տարբեր քաղաքներում հայերի թուի, տեղի հայկական հաստատութիւնների եւ կազմակերպութիւնների, բնակչութեան դասային կազմի եւ զբաղուածութեան մասին:

Ռուսիայի հայոց թեմին կից «Արեւելեան Եւրոպայի հայկական համայնքների ուսումնասիրման կենտրոնի» ստեղծումը պայմանաւորուած է նաեւ այն հանգամանքով, որ այժմ իսկ թեմի ուսումնասիրութիւններ են իրականացուած մի քանի ուղղութիւններով: Հայաստանից եկած արուեստաբանները ուսումնասիրում, քարտազրում եւ նկարագրում են թեմի թանգարանում եւ եկեղեցիներում պահուող եկեղեցական սպասքն ու հանդերձները, զեղանկարներն ու գորգերը:

Մենք մշակել ենք արխիւը, եւ այժմ ձեռնամուխ ենք եղել ձեռագրացուցակի կազմմանը եւ վիճագրերի վերծանմանն ու հրատարակութեանը:

Անհրաժեշտ է նշել, որ իրականացուող այս աշխատանքները ունեն ոչ միայն գիտական, այլեւ հոգեւոր-ազգային արժէք, քանի որ ուսումնահայերը շարունակ յիշում են, որ իրենք կրողն են անիական ակունքներ ունեցող անցեալի փառաւոր մի ժառանգութեան:

Անցիների սերունդներ լինելը Եւրոպայի հայութեան համար դարեր շարունակ դարձել է մի

իւրօրինակ ազգային ինքնագիտակցութիւն: Անիի աւերակների փոխարէն իր հիմնած գաղթավայրերում Անիի ոգեղենութեան կերպարը վառ պահելը, մի օր այն վերստին Բագրատունեաց փառքի երբեմնի մայրաքաղաք փոխադրելը վերածուած է ազգային ապրեցնող գաղափարի:

Յիշեալ երկրների հայութիւնը իրեն համարելով անցիների ժառանգներ աւանդաբար կազմել է ներքին հաւաքական մի ամբողջութիւն եւ այս երկրների հայ համայնքների պատմութիւնը ու աւանդութիւնները սերտօրէն կապուած են իրար, որոնցում կենտրոնական դիրք է գրաւում Սուչավայի Հաճկատարը:

Այստեղ ամէն տարի Տիրամօր վերափոխման տօնին կատարուող ուխտագնացութեանը ուխտի են գալիս աշխարհի տարբեր կողմերում գտնուող ուսումնահայերը:

Ելնելով այս իրողութիւնից Հաճկատարի հինգհարիւրամեակի օրերին անցեալ տարի՝ 2012թ. երիտասարդական մի ուխտագնացութիւն կազմակերպեցինք, որին մասնակցեցին մի շարք երկրների հայկական համայնքների երիտասարդները: Նման ուխտագնացութիւնը կարող ենք դարձնել աւանդական Ռուսաստանի, Ռւկրանիայի, Մոլդովայի, Լեհաստանի, Հունգարիայի ու Ռուսիայի հայ համայնքների երիտասարդների մասնակցութեամբ, կարգախօս ունենալով Անին, որպէս ազգային ինքնութեան արմատները տանող ճանապարհ եւ Սուչավան, որպէս ազգային-հոգեւոր ինքնութեան տեղային մի խորհրդանիշ Արեւելեան Եւրոպայում:

Դէպ անիական ու ազգային-եկեղեցական դարաւոր յիշատակներով օժուոն Սուչավա կազմակերպուելիք նման ուխտագնացութիւնը ազգային-հոգեւոր համախմբման մի հրաշալի միջոց կը լինի իրար կից այս երկրների երիտասարդների համար, միաժամանակ աւելի դառնալով մէկ անգամ եւս յիշեցնելու եւրոպական ճարտարապետութեան ու արուեստի վրայ անիական աւանդների այն ազդեցութեան մասին, որոնք այնքան հիմնաւորուած ձեւով ցոյց է տուել Յոզեֆ Ստրիկովսկին:

Մեր կողմից ստեղծուող այս կենտրոնը կիրականացնի հետեւեալ գործառնոյթները.



Ա. Համապատասխան մշակման, ուսումնասիրման ենթարկել եւ գիտական շրջանառութեան մէջ դնել Ռուսիայի հայոց թեմի տնօրինութեան ներքոյ, ինչպէս նաեւ Ռուսիայի հայկական եւ ուսումնասիրութեան ներքոյ վեր հանելու միջոցով Մայր Երկրի աւանդների փոխանցումը եւ կենսունակ պահպանումը Եւրոպայի հայկական համայնքներում:

Բ. Հաւաքել եւ համակարգել Արեւելեան Եւրոպայի հայ համայնքներին վերաբերուող հրատարակութիւնները եւ կատարուելիք

ուսումնասիրութիւնները: Գ. Զբաղուել նաեւ Անի-Եւրոպայի փոխառնակցութիւնների ուսումնասիրմամբ, առկայ հետազօտութիւնների եւ կատարուելիք աշխատանքների միջոցով վեր հանելու միջոցով Մայր Երկրի աւանդների փոխանցումը եւ կենսունակ պահպանումը Եւրոպայի հայկական համայնքներում:

Տ. Տաքել եպիսկոպոս Յակոբեան Առաջնորդ Ռուսիայի Հայոց թեմի

Save Support Sustain logo with SYRIAN ARMENIAN RELIEF FUND text and contact information: Syrian Armenian Relief Fund, P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948, www.syrianarmenianrelieffund.org

Large advertisement for the 'ՊԱՐԱՅԻՆ ՆԱՄՈՅԹ' (Parayin Namoyt) event. It features the event title in large letters, the organizing body 'Կատարողութեամբ՝ Ն.Ս.Մ.Միութեան Պարախումբին', the date 'Տեղի կ'ունենայ Շաբաթ, Յունուար 11, 2014', the location 'Երեկոյան ժամը ճիշտ 7-ին', the address '3700 E. Sierra Madre Blvd., Pasadena, CA 91107', and the ticket price '\$20.00'. A logo with the letters 'ՄԱՍ' is on the left.



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

*Հայաստանի Ծնողագուրկ Հաշմանդամ Երեխանների
Հայ Ամերկեան Ֆոնտը*

*իր հազարաւոր համակիրներով
Շնորհաւորում է համայն աշխարհի հայութեան
Նոր Տարին եւ Ս. Ծնունդի տօները
եւ շնորհակալութիւն յայտնում այն ազնիւ մարդասէր մարդկանձ որոնք
14 տարի անսակարգ թիկունք եղան
Հայաստանի Ծնողագուրք Երեխանների Ֆոնտին*

*2014 թուականը թող խաղաղութեան տարի լինի համայն աշխարհի
ժողովրդների համար*

*Հայ Ամերկեան Հայաստանի Ծնողագուրկ Հաշմանդամ Երեխանների Ֆոնտի
հիմնադիր Հովհաննէս Բալայեան
եւ Գործադիր Մարմին*

ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.
FOR DISABLED CHILDREN AND FOR THE RESTORATION OF CHILDREN'S HOMES
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՅՆԵՐԻ ԿԵՐԱՆՈՐԴՈՒԹՅԱՆ
P.O. Box 250038 • Glendale, CA 91225 • Tel: 818.246.0125
A Tax-Exempt 501(C)3 Charity E-mail: forourkids99@gmail.com

PROJECT 2013; 44,000 SQ. FEET

Dalar School
Dalar is a town in the Ararat Province of Armenia.

Let's build together

Dalar (Դալար) is a town in the Ararat Province of Armenia.

Everyday we build the dreams and future of our children with your generous donations. In their prayers they remember you and give their blessings upon you.

Ձեր օգնութեամբ մենք ամէն օր կառուցում ենք, հանգստութիւն և ուրախութիւն պարգևում հայրենի կարօտեալ երեխաներին: Նրանք իրենց աղօթքներում միշտ յիշում և օրհնում են ձեզ...

**ՍԻՐԻԱԿԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՆԴԷՍ**

Ա մ ե թ ի կ ա յ ի
«Ծնողագուրկ» եւ
հաշմանդամ երեխա-
ների Սուրբ Ծննդի»
հայ-ամերիկեան բա-
րեգործական հիմ-
նադրամի նախաձեռ-
նութեամբ Հայաստա-
նում ապրող սիրիա-
հայ երեխաների եւ
նրանց ընտանիքների
համար Յունուարի
3ին, «Արամ Խաչատր-
եան» համերգատրա-
հումբը կազմակերպ-
ուի բարեգործական տօնահանդէս:

Ինչպէս «Արմենպրես» ին տեղեկացրեց «Հայաստանի Ֆիլիարմո-
նիկ Կենտրոնի» տնօրէն Լաւրտ Մովսիսեանը, Յովհաննէս Բալայեանի
ղեկավարած բարեգործական հիմնադրամը հաշմանդամ եւ ծնողա-
գուրկ երեխաների համար նման միջոցառում իրականացնում է արդէն
14րդ անգամ: «Ինչպէս միշտ, տօնին կը մասնակցեն մանկատների
սաներ, հաշմանդամ եւ անապահով ընտանիքների երեխաներ, կարիւ-
ւոր մանուկներ: Բացի պաշտօնական մաղբանկներից, երեխաները կը
դիտեն Աշոտ Ղազարեանի դպրոցի պատրաստած ամանորեայ ներկա-
յացումը, Ջմեռ պապիկից կը ստանան նուէրներ, կ'երգեն, կը պարեն,
կ'ուրախանան», նշեց Մովսիսեանը:

Բացի դրանից, «Ծնողագուրկ եւ հաշմանդամ երեխաների Սուրբ
Ծննդի» բարեգործական հիմնադրամը 2014 թ.ի գարնանը կ'աւարտի
Արարատի մարզի Դալար գիւղի մանկապարտէզի հիմնավերանորոգ-
ման աշխատանքները: